Մարկիզ Հարտինգտոնի ճառի այս մասը արտատպելով, գերմանական լրագիրները հետևեալ կարծիքներն են յայտնում։ «Մարկիզ Հարտինգտոնի վերջինեալ խօսքերի խօսները, կամ կարդացողները բնականաբար պէտք է մտածեն, որ անգլիական ազատամիտ կուսակցութեան առաջնորդը համոզված է, թէ աւստրիական կամ գերմանական քաղաքականութիւնը Ֆրանսիայի վերաբերութեամբ թշնամական ուղղութեան է հետևում։ Մենք կարծում ենք, որ մարկիզ Հարտինգտոնի ենթադրութիւնը սխալ է։ Ինչպէս Գերմանիան, նոյնպէս և Աւստրո-Ունգարիան ոչ շահ և ոչ ցանկութիւն ունեն Ֆրանսիայի վերաբերութեամբ թշնամաբար գործելու։ Նոքա աւելի էլ չեն ցանկանում, որ Անգլիան մասնակցի այդպիսի թշնամական դաշնակցութեանը։ Սխալ է նոյնպէս և այն ընդհանուր ենթադրութիւնը, իբր թէ երկու պետութիւնների դաշնակցութիւնը առհասարակ պէտք է թշնամական նպատակներ ունենայ երրորդի վերաբերութեամբ։ Ոչ Աւստրո-Ունգարիան և ոչ Գերմանիան թշնամական դիտաւորութիւններ չունեն ոչ Ֆրանսիայի և ոչ Ռուսաստանի դէմ։ Այդ երկու պետութիւնների ընդհանուր շահերը պահանջում են, որ եւրոպական խաղաղութիւնը պահպանվի և երկուսն էլ իրանց շահի համար պատրաստ են պաշտպանել այդ խաղաղութիւնը։ Որքան մեզ յայտնի է մինչև այժմ ոչ ոք չէ աշխատել համոզել Անգլիային մասնակցել այդ դաշնակցութեանը խաղաղութիւնը պահպանելու համար։ Ժողովուրդների շահերը գուցէ պահանջում են, որ կառավարութիւնները ապահովեն իրանց հպատակներին նոր պատերազմների տարաբաղդութիւնների դէմ, բայց ոչ Աւստրո-Ունգարիան և ոչ Գերմանիան միտք չեն համոզել Անգլիային այդ մտքի մէջ և բոլորովին չեն ցանկանում բաժանել նրան Ֆրանսիայից։ Կրկնում ենք, որ այդպիսի փորձ ոչ ոք չէ արել, նրա մասին մինչև անգամ չեն անհարկել։ Ոչ Աւստրո-Ունգարիա և ոչ Գերմանիա չեն համաձայնվի աշխատել, որ Անգլիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները առաչեն։ Բեռլինի և Վիէննայի քաղաքականութեանը ուղղութիւն տուող մարդիկ համոզված են, որ Անգլիայի և Ֆրանսիայի բարեկամական յարաբերութիւնները նոյնքան օգտակար են եւրոպական խաղաղութեան համար, որքան Գերմանիայի և Աւստրիայի բարեկամութիւնը։ Քանի որ Անգլիան և Ֆրանսիան միմեանց հետ համաձայն կը լինեն, նրանց քաղաքականութիւնը աւելի խաղաղաւէր և իրաւացի կը լինի, քան թէ այն ժամանակ, երբ այդ երկու պետութիւնները միմեանցից առանձնացած կը լինեն։ Այդ երկու պետութիւնները կարող են համաձայնվել միմիայն այնպիսի նպատակների վերաբերութեամբ, որոնք խելացի և եւրոպական քաղաքակրթութեան շահերին համեմատ կը լինեն։ Քանի որ այդ երկու արևմտեան մեծ պետութիւնները ձեռք ձեռքի տուած կը գործեն, նոքա փոխադարձաբար կը զգուշացնեն միմեանց խաղաղութիւնը խանգարել և երկուսն էլ խաղաղ և քաղաքակրթող քաղաքականութեանը կը հետևեն։ Այդ հանգամանքները ի նկատի ունենալով, Բեռլինի և Վիէննայի կառավարութիւնները Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութիւնը եւրոպական խաղաղութեան գրաւական կը համարեն։ Մարկիզ Հարտինգտոն, եթէ լաւ ծանօթ լինէր եւրոպական քաղաքականութեան հետ, երբէք չէր ենթադրի, իբր թէ Աւստրիա և Գերմանիա աշխատում են խանգարել Անգլիայի և Ֆրանսիայի բարեկամութիւնը։ Կարծես արդէն նկատված է, որ անգլիական պարլամենտի անդամների ընտրութիւնների ժամանակ, զանազան կուսակցութիւնների առաջնորդները ընտրողների առաջ եւրոպական քաղաքականութեան վրա այն տեսակէտից են նայում, որը շահաւէտ է իրանց կուսակցութեան համար։ Դա շատ բնական է և պատահում է պարլամենտական կեանք ունեցող իւրաքանչիւր երկրի մէջ։ Բայց քանի որ Անգլիայի նման մի հզօր պետութիւն իր համար նոր պարլամենտ է պատրաստում, եւրոպական պետութիւնների շահերը պահանջում են, որ նրանց քաղաքականութիւնը ոչ թէ սխալ կերպով, այլ ճշգութեամբ մեկնվի ընտրողներին»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էրզրումից մեզ գրում են որ քաղաքի մօտակայ Միւգիւրգեայ գիւղում պատահել է մի զարհուրելի անցք մի սովամահ հայի տան մէջ։ Այդ գիւղացի մի հայր, հասնելով սովից կատաղի խելագարութեան, մորթում է իր սովից որբացած միակ երեխին և խորովելով նորան սկսում է յագեցնել սովի տանջանքը։ Հարեւանը լսելով մսի հոտը ներս է մտնում և որդեկեր հօրը գտնում է սարսափելի անցքի մէջ։ Ասում են որ ուշքի գալով կատաղի սովեալը ինքը մատնում է իրան ոստիկանութեան, որը սկսել է դատել նորան ինչպէս արիւնարբու մարդասպանի։

***

Էրզրումից մեզ գրում են որ անգլիացի ագենտները մեծ եռանդով հետևակ և ձիաւոր զօրքեր են հաւաքում Հայաստանի վիլայէթներում, ինչպէս մահմեդական, այնպէս էլ քրիստոնեայ տարրերից, վճարելով իւրաքանչիւր ձիաւորին հինգ ոսկի ամսոց, իսկ հետևակին $2\frac{1}{2}$ ոսկի։ Ասում են որ առհասարակ կամաւոր զինուոր գրվողների թիւը շատ մեծ է և հայերը միահաւան վճռել են ուրախութեամբ գրվել կամաւոր զինուորներ այն պայմանով միայն, որ նոցա չուղարկեն Հայաստանի սահմանից դուրս ծառայելու։ Ծառայութեան ժամանակը 7 տարի է։

***

Պարսկաստանի Սալմաստ գաւառի Դլասար գիւղից պ. Պատոյ Արզումանեանց մեզ գրում է, թէ ստացել է Դուրէմից պ. Ալէքսանդր Թամբրեանցից 20 թուման նոյն գաւառում գտնված աղքատիկ գաղթականներին բաժանելու համար։ Գաղթականների թիւը հասնում է աւելի քան 1500 հոգու։

***

Էրզրումից մեզ գրում են, որ մինչև մարտի 10-ը Ալաշկերտի գաւառում սովից մեռնող հայերի թիւը հասնում է 200 հոգու։ Սովը աւելի մեծ կոտորած է անում այս գաւառի քրդերի մէջ, որոնք ոչինչ չունեն ուտելու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է Թագուհու առողջութեան մասին բիւլլետէնը։ Մարտի 26-ից մինչև ապրիլի 1-ը, անցեալ շաբաթ Թագուհու առողջութեան մէջ նկատված բարելավվելը՝ շարունակվում էր փոքր փոփոխութիւններով։ Ներկայ ամբողջ շաբաթվայ ընթացքում քունը և ախորժակը բաւականացուցիչ էին։ Ուժերը նոյնչափ են պահպանվում։ Սառադրեցին բժիշկներ Աիլեչեվսկի և Բոտկին։ Իշխան Գորչակովի առողջութիւնը լաւանում է։

ՄԱԴՐԻԴ, 2 14 ապրիլի։ Այսօր առաւօտ Օտերօ գլխատված է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 93 ր., երրորդ 92 ր. 50 կ., չորրորդ 93 ր.։ Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ր., երկրորդ 221 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր., ոսկի 7 ր. 74 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 25,40 պէնս, ռուսաց 100 րուբլ Համբուրգի վրա 216 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 216 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թող նկատեն մանուկի տակից և ԾԱԽԿԱՒՈՒՄ է ԹԷ ԿԱՆՏՐՕՆԱԿԱՆ և ԹԷ Ջ. ԴՐԻԴՈՒՆԱՆԻ գրավաճառանոցներում և ապ. Վառուբեանի խանութում «ՓԵՐՓՈՒՆԱՔ և ԹԱՓԱՄԱՆՈՒԹԻՒՆ, ապ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Աբծրունեաց: Գիրքը բաղկացած է 243 երեսներից: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particulièrs sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

3—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեգինակութիւն ԸՆՁՓԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ընծին մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին առորագրութիւն չէ ընդունվում:

Առորագրվել կարելի է ԳՆԱՒՈՆՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՓԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատունը Յ. ՄԻՆԱՒՈՐ-ՅԱԿՈՐԵՆՑՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ գեղարուեստական «Ուսումն առողջապահութեանս» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Դրիգորեանցի Կովկասեան Դրամաճառանոցում: Գինն է 35 կօպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ յանկանում է ԴՆԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղագրութեամբ ՆԿԱՐՉԻՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, Մուխթանովու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կ սրդ է տալ թէ իր բնակարանում և յանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

10—10

Օրերումս դուրս կեան մանուկի տակից և վաճառվում են Օ. Գ ր ի գ օ ր է ա ն ց ի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ա գ ա մ ե ա ն—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:

2. Պ օ կ ա տ ր Լ օ կ—Ա ս ու մ ն ա ս ո ղ ջ ա պ ա հ ու թ է ա ն Տփ., 80 թ. — 35 կ.:

3. Ֆ ր է յ դ ո ւ ն—Տաւիղ յիսնապի Տփ. 80 թ. — 30 կ.:

4. Պ ո ւ կ ա ս ե ա ն ց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:

5. Պ ա մ ա ռ-Ր ա թ ի պ ա յ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:

6. Նոյնը կազմած — 25 կ.:

7. Ա ի լ լ ի ս փ է լ փ ո ք. Հ ա խ մ ի տ ա յ ի ն փ ր ա ն կ ի ս կ է (Գրանշէական դա Նոխմինի). Վանական Գրանշէական, Նէստարպիի ա. Յատիան. Տրանոյ ձերը: Ը. Մ. Ն. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Ե ր կ ո ւ շ ա բ թ ի. Գ ա վ ր օ ն ա կ ի կանանց հիւանդ. Գ օ ր ա լ ե վ ի չ Ներքին հ., Բ օ ա խ ն ե ա ն ց կանանց և երեխաների հ., Ջ ի ւ շ ա բ ե ա ն ց խորուրգիական և աչքերի հ., Շ ա հ մ ր օ ր օ կ ի վիներական և կաշու հ., Բ ա բ ա յ ե ա ն Ջոպային և հոգեկան հ.:

Ե ր ե ք շ ա բ թ ի. Մ ի ն հ ե վ ի չ խորուրգիական հ., Վ. զ օ ր օ վ վիներական և բողոքի հ., Բ է յ կ ա աչքի հ., Բ ա խ ու ռ օ վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կ ր ա ս ն օ գ լ ա պ օ վ, Լ ի ս ի ց ի ն և Վ ե ր մ ի շ ե վ Ներքին հ.:

Չ ո ր ե ք շ ա բ թ ի. Լ ի ս ի ց ի ն և Բ ու կ օ վ ա կ ի Ներքին հ., Շ ա հ մ ր օ ր օ կ ի վիներական և կաշու հ., Ա ա ռ ա ւ ա ծ ա ռ ու ր օ վ կանանց հիւանդութիւններ:

Հ ի ն գ շ ա բ թ ի. Վ. զ օ ր օ վ վիներական և բողոքի հ., Բ օ ա խ ն ե ա ն ց կանանց և երեխաների հ., Լ ի ս ի ց ի ն և Վ ե ր մ ի շ ե վ Ներքին հ., Բ ի ւ շ ա բ ե ա ն ց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ու ր բ ա թ. Գ ա վ ր օ ն ա կ ի կանանց հ., Մ ի ն հ ե վ ի չ խորուրգիական հ., Կ ր ա ս ն օ գ լ ա պ օ վ և Լ ի ս ի ց ի ն Ներքին հ., Բ ա խ ու ռ օ վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շ ա հ մ ր օ ր օ կ ի վիներական և կաշու հ., Բ ա բ ա յ ե ա ն Ջոպային և հոգեկան հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զ օ ր օ վ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ապրատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բ ա բ ա յ ե վ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրայ, Բարանդուրովի տանը:

Առանձնապէս Օ ր բ ե ւ ս ապրատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամեակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լ ի ս ի ց ի ն:

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիսնամի Տաւիղ» Ֆրէյդանի գրքոյկը պ. Ջ. Դրիգորեանցի և Կենսաբանական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Փետրվարի 12-ից ԹԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՑՎԻ տանը կՕՆԴԻՏԼՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ. Օտար քաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Գաւառէները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնացներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կօնֆէկտների գինը ֆունտը 40 կօպէկից մինչև 1 ր.:

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երեսաստրդ տալիս է հաշուապահութեան դասերը՝ բանկի, փարթիկայի, առևտրական կոմմիսիոներութեան, երկաթուղու և այլն:

Դարձնել Թիֆլիսի Կազենի Պատատամ, կամ Սուրբ Նշանի փողոցում, Մրիամի տունդի դիմացը, № 17 պ. Յակովը Տէր-Յակովլեանցին:

4—5

Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյ «Թանդոյեանց» օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը, տալիս է կատարեալ նոյն ուսումնարանական կրպակները և անկոհները: Պայմանախօսքը կարելի է կարդալ նոյն ուսումնարանում ամենայն օր, իսկ աճրպարհօսութիւնը կը լինի ամսոյս 24-ին առաւօտեան 10 ժամին:

1—2

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկում առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին առանձին համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Աբգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Փիշմիշեան:

7—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Օ ձ ն Կ ա թ լ ա ս» (Հետաքննութիւն ձշմարտութեան) Պ է ս կ օ տ ա թ, «Ա բ ր ա հ ա մ Լ ի ն կ օ լ ն» ս ա ր օ ւ հ ն ե ր ի ն ազատող Վիլհելմ Հօշմանի, և Մ օ լ ի է ր ի «Ա մ ու ս ն ա ց ո ղ ն ե ր ի ն խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվում են Մ օ լ ի է ր ի հետ «Ց ա ր ի Ֆ կ ա մ Կ և զ ծ ա ւ ո ր» և «Կ և զ ծ հ իւ ա ն դ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-գ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՑ ԳՐԻԳՕՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՑ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (роспись) մանաւանդ և բանկային վէկսէլներ, և բոլոր ուրիշ պատրաստերհամներ և ակտեր, ես անուավիր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-գ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՕՎ:

Дозволено Цензурою 4 Апрѣля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 59 Ապրիլ 9 (21) **1880** Ապրիլ 9 (21) № 59

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրգան։—Ներքին տեսութիւն։ Երեխաների խնդիրը Եւրոպայում և Ռուսաստանում։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Խռաքդրից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հեռագիրներ։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական խնծոր։

ՀԱՅՈՑ ՕՐԳԱՆ

Ընթերցողը կարդացած կը լինի «Մշակի» մէջ, որ ակադեմիկոս Պրուդնիկով դիտաւորութիւն ունի հրատարակել Մոսկվայում մի ամսագիր և մի լրագիր, որոնք կը պարապեն Արեւելքի ուսումնասիրութեամբ։

Ամսագիրը կը հրատարակվի ռուսերէն լեզուով, իսկ լրագիրը երեք լեզուներով՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով։

Ի հարկէ դա ուրախալի երեւոյթ է, որ վերջապէս Արեւելքը դառնում է ռուս գրականութեան և լրագրութեան ուսումնասիրութեան առարկայ։ Ռուսաստանը շատ քիչ տեղեկութիւն ունի արեւելեան ազգերի կեանքի մասին և պ. Պրուդնիկով, ինչպէս երեւում է, կամենում է միջոց տալ ռուս հասարակութեանը ծանօթանալ արեւելեան ազգերի կեանքի հետ։

Բայց բացի այդ տեսակ ամսագրից և լրագրից, հարկաւոր կը լինէր որ մայրաքաղաքներից մինի, կամ Մոսկվայի, կամ Ս. Պետերբուրգի հայերը մտածէին վերջապէս հիմնել իրանց օրգան ռուսերէն լեզուով։

«Մշակի» հրատարակման ամբողջ ընթացքի ժամանակ մենք անդադար յայտնում էինք այդ միտքը։ Մենք ընդգէմ էինք Ս. Պետերբուրգի մէջ հայոց լեզուով ամսագիր հրատարակելու միքին և ընդհակառակն առաջարկում էինք հիմնել մի ռուսերէն լրագիր, կամ ամսագիր, որ դառնար Ռուսաստանի հայերի շահերի օրգան։

Նոյն աչա հրէաներն անգամ կարողացան այդ միտքը իրագործել. նրանք ունեն Ռուսաստանում երկու լրագիրներ ռուսերէն լեզուով, մինը «Разсвѣтъ», իսկ միւսը «Русскій Еврей» վերնագրով։ Եւ նրանք համարձակ գրում են իրանց լրագրի ճակատի վրա «Ռուսաստանի հրէաների օրգան»։

Որեւէ շատ բաներում, մենք հայերս սովորած ենք այժմ օրինակ վերցնել հրէաներից։

Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հայերը բոլոր միջոցներ ունեն իրագործել այդ տեսակ օրգան. ռուս մայրաքաղաքներում կան և ուսումնական հայերը և բազմաթիւ հայ ուսանողներ, որոնք կարող էին աշխատակցել լրագրին և վերջապէս հարուստ հայեր, որոնք նիւթական միջոց կարող էին տալ մի օրինաւոր օրգան հիմնելու և պահպանելու համար։

Եւ մենք հաւատացած ենք որ այդ տեսակ լրագիր շատ բաժանորդներ կունենար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

II

Գ. Մեչնիկով սրտառաջման մէջ ընկնող երեխաների դրութիւնը նկարագրելուց յետոյ, խօսում է Ռուսաստանի երեխաների մասին:

Մանկավարժութիւնը հետազօտելով ուսումնարանների դրութիւնը այն եզրակացութեան է հանում, որ նրանցից շատերը գիտութեան պահանջներին չեն համապատասխանում։ Ռուսաստանի ուսումնարաններից շատերը այդ թւին են պատկանում։ «Педагогическій музей», մեր ամենալաւ մանկավարժական թերթը, ասում է հեղինակը, կրթութեան եղանակը չը քննելով, իր առաջին համարներում ընդարձակ յօդուած է նւիրում մեր ուսումնարանների առողջապահական պայմաններին։ Բժիշկ Զուրկովսկու պաշտօնական քննութիւնների վրա հիմնված, այդ յօդուածը նկարագրում է Պօլցկի գիմնազիական գիմնազիայի դրութիւնը։

Ուսումնարանի ազդեցութեան մասին երեխաների կազմուածքի վրա սկսեցին խօսել 30 տարի սրանից առաջ։ Լուսաւորութեան մինիստրութեան թերթը 1869 թուին յայտնել է, որ «Ռուսաստանի մէջ շատ անգամ հաստատութեան պահանջներ են լսվում, թէ երեխաները գիմնազիաներում իրանց ույժերին անհամեմատ աշխատանքներով են ծանրաբեռնված և որ այդ գանգատները շատ անգամ իրաւացի են լինում»։ Ուսումնարանական իշխանութիւնը այն ժամանակ աշխատում էր ոչնչացնել ույժերին անհամեմատ պարապմունքների վատ ազդեցութիւնը երեխաների առողջութեան վրա։ Առողջութիւնը ամրացնելու համար ամեն տեղ սկսեցին մարմնամարզութիւն դաս տալ, բայց այդ բաւական չէր։ Արտասահմանի մէջ բժիշկների հսկողութիւնը ուսումնարանների առողջապահական պայմանների վրա անհրաժեշտ են համարում։ Ռուսաստանի մէջ բժիշկը ուսումնարանի մէջ օտար անձն է համարվում։ Մինչդեռ նա կարող էր հասկացնել ուսուցչին, որ 10—12 տարեկան երեխային երկար ժամանակ կանգնեցնելն . . .

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Ա.

Ամենամեծ մարդիկն անգամ ունենում են խոշոր թուլութիւններ։ Թօմաս էֆէնդին թէև մեծ մարդկերի կարգին չէր պատկանում, բայց Ալաշկերտի գաւառում հոկայ էր համարվում։ Ասում են գոնված տեղում աղուէսն էլ խոշոր գազան է։ Այդ մարդն էլ, որքան գործունեայ, որքան ճարպիկ էր, գարձեալ ունէր իր փոքրիկ թուլութիւնները։ Ամբողջ ցերեկը անցկացնելով իր պաշտօնին վերաբերեալ աշխատութիւններով, գիշերները շատ անգամ լուսացնում էր նա զանազան տեսակ անպարկեշտական քէֆերով, և թուրք պաշտօնատարների մոլութիւններին հետեւելով, արաղ էր խմում, աղջիկներ ու տղաներ էր պար ածում, և իրան շրջապատում էր զանազան տեսակ ածալիկներով (երաժիշտ)։ Ամեն մի գիւղ մտնելիս, ամեն մի գիւղացու խրճիթի դռները բաց էին նրա առջև։ Ո՞վ կարող էր չընդունել այդ բարձրաստիճան հիւրին։ Ընդհակառակն, գիւղացին պատիւ էր համարում իրան, երբ Թօմաս էֆէնդին ոտք կը կոխէր նրա շէմքի վրա. թէև նրանից չէր շահվում, ուտեցնում էր, խմեցնում էր,—բայց այդ էլ բաւական էր, որ Թօմաս էֆէնդին կը սկսէր այնուհետև բարի աչքով նայել իր հիւրասիրողի վրա։

Մի երեկոյ գզիրը մի աղքատ գիւղացու տանը լուր տուեց, թէ էֆէնդին պէտք է հիւր լինի։ Տան տէրը մի քանի գիւղերի միակ արհեստաւորն էր, շինում էր երկրագործական անօթներ, նորոգում էր վնասված գութաններ, արօրներ, սայլակներ և այլն։ Նա բատ մեծի մասին իր տանը չէր գտնվում, որովհետև ման էր գալիս գիւղից գիւղ և իր համար գործ էր պտռում։ Այս երեկոյ նոյնպէս տանը չէր։ Արհեստաւորի կինը պատասխանեց գզիրին, թէ մարդս տանը չէ, ինչպէս կարող եմ ընդունել էֆէնդուն։

—Մարդդ տանը չէ, տունը խօ իր տեղն է, ասաց գզիրը կոշտ կերպով։

Այդ գզիր կոչվածներն էլ մի առանձին պատիժ են խեղճ գիւղացու համար։ Դրանք պաշտօնական անձինքների ստորադական չներն են. սաստիկ հաստատութիւն ունեն, և խիստ վարժված են, թէ ինչ ճանապարհներով պէտք էր հետամուտ լինել որսին…

Արհեստաւորի կինը չուարած մնաց և խօսք չը գտաւ պատասխանելու գզիրին։

Գզիրը իր հրամանը կատարած համարելով, հեռացաւ, աւելացնելով.

—Էֆէնդին կը գայ, երբ ճրագները կը վառվին։

Խեղճ կինը մի քանի րոպէ, որպէս քարացած, կանգնել էր իր խրճիթի դրանը, և չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել։ Նրա տղամարդը տանը չէր, նրան անվայել էր մի օտար և անծանօթ հիւր ընդունել իր մօտ։ Նա մտաւ իր դրացի Օհօի խրճիթը և խնդրեց նրան, ասելով.

—Եղբայր Օհօ, գզիրը լուր տուեց, թէ էֆէնդին այս գիշեր մեզ մօտ պիտի լինի. մարդս տանը չէ, ի սէր Աստուծոյ, եկէք և կառավարեցէք նրան։

—Այս ինչ բան է, պատասխանեց Օհօն բարկանալով,—այս գիւղում էլ ուրիշ տան չը կար։

—Չեմ իմանում, ասաց կինը վշտացած ձայնով, —գզիրը այսպէս պատուիրեց։

Դրացի Օհօն խոստացաւ, որ ինքը կընդունէ հիւրին և կնոջը մենակ չը թողնի։

Թօմաս էֆէնդին այնքան ծանօթ էր այս գաւառի հետ, որ ամեն մի գիւղ մտնելիս, շատ լաւ ընտրութիւն անել գիտէր խշեանների մէջ, թէ որ տունը աւելի յարմար էր գիշերելու համար։ Նրա ճաշակը այդ մասին բաւական զարգացած էր։ Գլխաւոր պայմանները, որ համապատասխանում էին նրա պահանջներին, դրանք էին, որ տան տէրը աղքատ և փոքր ինչ յիմար լինէր, և եթէ յիմար չէր, պէտք է գոնէ խմելու հետ սէր ունենար (երկու յատկութիւններ, որ շատ չեն զանազանվում միմեանցից) և ամենագլխաւորն այն էր, որ պէտք է տան մէջ գտնվէր մի գեղեցիկ կանացի դէմք, որի վրա նայելը զուարճութիւն պատճառէր նրան։

Բայց այս գիշեր ընտրած խշեանը մասամբ չէր համապատասխանում էֆէնդու պահանջներին. տան տղամարդը, վարպետ Պետրոսը, մի համեստ և աշխատասէր արհեստաւոր էր, ոչ յիմար էր և ոչ խմելու հետ սէր ունէր։ Այսուամենայնիւ, էֆէնդին չէր սխալված իր ընտրութեան մէջ, որովհետև տղամարդը տանը չէր, կինը վատ չէր գէմքով, իսկ նրա հասած քոյրը իր գեղեցկութիւնով գիւղի մէջ առաջին աղջիկն էր համարվում։

Գիւղի խրճիթների մէջ ճրագները վառվեցան։ Արհեստաւորի կինը, Սուսանը, թոնիրի վրա կերակուր էր պատրաստում։ Արհեստաւորի քոյրը, մանկահասակ Վարվառէն, իւղի մէջ հաւեր էր տապակում։ Դրացի Օհօն զանազան կարգադրութիւններ էր անում, որ ոչինչ պակաս չը լինի և ամեն բան վայելուչ լինի պատուելի հիւրին ընդունելու համար։ Բոլորը պատրաստ էր, երբ յայտնեցաւ էֆէնդին գզիրի առաջնորդութեամբ։ Ջարթիանները այս գիշեր նա իր հետ չէր վեր առել, նրանց մի ուրիշ տեղ հիւր էր տուել։

Դրացի Օհօն ընդունեց էֆէնդուն ամենայն խոնարհութեամբ. և նա ծանր կերպով գնաց, նստեց իր համար պատրաստած օթոցի վրա։

—Ո՞ւր է վարպետ Պետրոսը, չէ երեւում, հարցրեց էֆէնդին իր չորսբոլորը նայելով,—ես նրան տեսնել էի ուզում, ես նրա հետ շատ հարկաւոր գործ ունէի։

Դրացի Օհօն պատասխանեց, թէ վարպետը գնացել է մերձակայ գիւղը բանելու համար։

—Ափսոս, շատ ափսոս, որ տեսնել չը կարողացայ, ես նրա հետ հարկաւոր գործ ունէի, կրկնեց էֆէնդին, և սկսեց բացատրել, թէ թագաւորական զօրքերին պաշար տեղափոխելու համար իրան պէտք են շատ սայլեր, և ցանկանում է վարձել մի մշտական հիւսն, որ ճանապարհների վրա սայլերը վնասվելիս, նորոգէր նրանց, և վարպետ Պետրոսից աւելի յարմար մարդ չէ գտնում, և կամենում է նրան մի լաւութիւն անել, որ նա շահվէր այդ գործից, և մի քանի ամիսների համար առանձին պարապմունք ունենար։

Թէև էֆէնդին առաջուց գիտէր, որ վարպետը տանը չէ, թէև նրան ամենևին վարպետ հարկաւոր չէր, որովհետև զօրքերին պաշար տեղափոխելու համար նա գիւղացիների սայլերը և անասուններն էր գործ ածում, բոլորովին ձրի, առանց մի փարայ վճարելու, և եթէ մի սայլ վնասվում էր, իրանք՝ տէրերն էին շինել տալիս,—բայց էֆէնդին այս խօսքերը ասելու մէջ մի առանձին նպատակ ունէր։ Աղքատ արհեստաւորի կինը, Սուսանը, լսելով էֆէնդու խոստմունքները, ուրախացաւ, մտածեց, թէ այդ հիւրից մեծ շահեր կարող են ստանալ, թէև նրա ինքնակոչ հիւր լինելը սկզբում այնքան ծանր և անախորժ երեւցաւ իրան։ Պէտք էր մի յոյսով քաղցրացնել միամիտ ամուսինոջ սիրտը,—այդ էր հարկաւոր էֆէնդուն։

Էֆէնդին միայն նստած էր։ Դրացի Օհօն գետնի վրա ծալապատիկ նստած էր, որ նրանից խոչրութիւն ստանայ, որ ինքն էլ նստէ։ Այդ . . .

Fonds A.R.A.M

—Շատ աստ, Թիմոն, շնորհակալ եմ քո խրատից, բայց ես ինձ համար արդեն որոշել եմ ինչ որ անել։

—Ինչպե՞ս, ուրեմն դուք ամուսնանում եք։

—Այո, ամուսնանում եմ հենց վաղը։

—Ուրեմն, ուրեմն ես ձեզ շնորհավորում եմ, ինչպես նաև ձեր հարսնացուին։ Ես հուսով եմ, որ նա ձեզ համար կլինի հավատարիմ կին, որ ձեր տունը կդարձնի դրախտ, որ ձեզ կսիրի ամբողջ սրտով, որ ձեզ համար կապրի, կշնչի, կմեռնի։ Ես հուսով եմ, որ նա ձեզ համար կլինի ամեն ինչ, որ ես չեմ եղել։

—Ես էլ հուսով եմ, որ նա ինձ համար կլինի ամեն ինչ, որ դուք չեք եղել։

—Ուրեմն, ես ձեզ շնորհավորում եմ, ինչպես նաև ձեր հարսնացուին։

—Ես ձեզ շնորհակալ եմ, Թիմոն։

—

Ալէքսանդրապօլեան խաւուղին (չասէն) կանցնի այ լաքի անմարդաբնակ ձորով, ինչպէս այդ նախագծած էր սկզբում ինժիներական վարչութեամբ, այլ նոր խաւուղին կանցնի աւելի կարճ և կարևոր կէտերով, ինչպէս Կոդի, Շուլավեր և Ջալալ-Օղլի։ Այս չռնուելս փոփոխութիւնը կատարված է, որչափ մեզ յայտնի է, Կեռկասեան Լրատարի մէջ պ. Մ. Սազաթելեանի յայտնած խորհրդի դրի մէջ պ. Մ. Սազաթելեանի յայտնած խորհրդի դրի մէջ, որ շատ ուրախալի է, ինչպէս մի ընդհանրական յաջողութիւն հասարակական ձեռնարկութիւնների վերաբերմամբ։

—

Լսում ենք որ եկող տարվայ հնագիտական միջազգային ժողովքի համար մի քանի հետաքրքրութիւններ անելու համար Հայաստանում պ. Ա. Երիցեանը, տէրութեան հաշուով, ուղարկվում է Հռոմով տանելոց Հայաստան։ Մենք կը ցանկայինք աջողութիւն պ. Երիցեանին, մանաւանդ որ, ցաւակցաբար պիտի ասած, հնագիտութեամբ պարապվողներ շատ քիչ կան այժմ Եվրոպատում, մինչդեռ եկող տարուայ ժողովքում Հայաստանի հնագիտութիւնը մեծ տեղ պիտի բռնէ։

—

Յայտնի է արդէն որ կովկասեան ցէնզուրական կոմիտէտը գատ է սկսել «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու դէմ։ Գործը պէտք է քննվի Թիֆլիսի նահանգական դատարանում մայիսի 23-ին։ Մեր տեղական երկու թերթերը ուս «Обозрѣ» և հայոց «Մեղու», որոնց համար գոյութեան նպատակն է յարձակվել «Մշակի» դէմ, գործ դնելով ամենատափակ սուր և կեղտոտ մէջբերներ մեզ վերնատելու համար, դեռ չը սպասած որ դատարանը քննի գործը և վճռի ով է արդար և ով է մեղաւոր, նոյն իսկ գործի հետ էլ բոլորովին ծանօթ չը լինելով, իրանց թոյլ են տալիս յանդգնի և անամօթ կերպով մեղադրել Գրիգոր Արծրունեան և նրա դէմ ամենասուր ինսինուացիաներ անել։ Որքան անպատիւ և սուր է այդ տեսակ վարմունքը,—թողնում ենք դատել հասարակական կարծիքին, իսկ մենք պատրաստ կը սպասենք դատարանի վճռին, մեր արժանաւորութիւնից աւելի համարելով որ և է բանախօսել այնպիսի թերթերի հետ, որոնց պարապմունք է միմիայն գնել ուրիշի երեսին, ազամաղել փառաները և ուրիշի պատիւն ու անունը աշխատել վայր գցել, իրանց ըմաննորդների թիւը աւելացնելու և իրանց անփական կեղտը ծածկելու նպատակով։ Սուր չհասկրութիւնը մեզ վարմունքի չարժառիթն է,—թող դարձեալ հասարակութիւնը դատէ։ Դա կը լինի մեր վերջին խօսքը, իսկ գործի մանրամասն բացատրութիւնը,—մենք դատարանի առջև կը տանք, մեր արժանաւորութիւնից աւելի համարելով որ և է բացատրութիւններ տալ այնպիսի գրականական պատ-

Ն. Գրիգոր Աննան և Տ. Շուշանիկ (Ամերիկա) Աննան ուղարկելով մեզ 14 ր. յօգուտ վաստակաւոր սովատանջների, գրում են մեզ հետևեալը. «Ինչպէս որ խոստացած էինք «Մշակի» № 23 մէջ մեր գրած նամակում, ահա ուղարկում ենք ձեզ մարտ ամսի մեր այրիների 5% որն անում է 14 րուբլի։ Խնդրում ենք այդ փոքր հատուցումը վաստակաւորների մեր սովատանջ եղբայրներին և քոյրերին»։

Թիֆլիսում բնակվող պ. Մկրտիչ Տէր-Մկրտչեանց ուղարկել է մեզ 13 րուբլի յօգուտ վանի սովատանջների, որ նա ժողովել է հետևեալ անձերից,—տիկին Մարիամ Ագաղանեանց 10 ր., իշխանուհի Մարիամ Յովսէփեան Տարխան-Մօուրավով 2 ր., և Մկրտիչ Տէր-Մկրտչեանց 1 ր., ընդամենը 13 րուբլի։

ԿԱՏԱՎԻՅ պ. Բարուրով ուղարկել է մեզ 10 րուբլի, որպէս զի մենք հատցնենք այդ փողը վանի սովատանջներին։

Չինգչաբթի, ապրիլի 3-ին, ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում տրվեցաւ մի կօնցէրտ յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների։ Մասնակցում էին տիկին Գամբարով, օրիորդ Խոսրեով, օրիորդ Սիրանուշ, պ. պ. Ադամեան, Մէլոփ, Մանդինեան և ուրիշներ։ Օրկէստրը ածեց Ջուխաջեանցի «Արշակ II» օպէրայի ուվերտիւրան, իսկ օր. Սիրանուշ երգեց պ. կօրդանօվի մի բօհեմեան կարգադրողները աշխատեցին կազմել կօնցէրտը այնպէս որ կատարված պիէսաների մի քանիսները հայ հեղինակների գրուածներ լինեն։ Տիկին Գամբարովի և օր. Խոսրեովի երաժշտական դեղեցիկ ընդունակութեան մասին մենք աւելորդ ենք համարում խօսել։ Ընդանց խօսքը պրպէն յայտնի է թիֆլիսցիներին։ Կենդանի պատկերները, մեր կարծիքով, չատ անաջող էին և ոչինչ տպաւորութիւն չը թողին հանդիսականների վրա. սված մարդիկ ու կանայք հոխ հագուստներով, յետոյ փոխանակ ցոյց տալու ինչպէս բաւականութիւն են ստանում վատանջները, մեր աչքի առջև ներկայացաւ հին հռոմէական կամ յունական չքեղ խնջոյք։ Որքան է եղել երեկոյի գուտ արդիւնքը,—մեզ յայտնի չէ։ Բայց ասում են եղել է գուտ արդիւնք 100 րուբլի։

—

Ասում են որ ապրիլի 3-ին թիֆլիսի թատրոնում յօգուտ սովելոց առած կօնցէրտի մասնակցողները վճարեցին դահլիճի համար թիֆլիսի հայոց թատրօնական կոմիտէտին 300 րուբլի։ Այդ օրը կոմիտէտի ներկայացման օրն էր, իսկ յայտնի է որ կոմիտէտը վճարում է պալմին 200 րուբլ իւրաքանչիւր երեկոյի համար։ Այժմ, չը նայելով որ կօնցէրտը բարեգործական նպատակով էր, այն էլ յօգուտ վանի սովատանջների, կոմիտէտը չը թաւականացաւ պահանջելու իր 200 րուբլ կօնցէրտ տուղներից, այլ աւելացրեց գործնալ 100 րուբլ չան։ Բնական չէ որ կոմիտէտը մրնչ այժմ ոչինչ չը առնց յօգուտ վանի սովատանջների, բայց աշխատում է չահվել երբ ուրիշները այդ նպատակով կենդէրտ են տալիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում հրատարակվող կղերական ուղղութեան «Univers» լրագրի մէջ տպված է հետևեալ նկատողութիւնը։

Մի քանի լրագրներ հաղորդում են, որ սենատօրներ, պատգամաւորներ և հոգևոր միաբանութիւնների ներկայացուցիչներ խորհրդակցում են Ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների առիթով։ Շատ բնական է այդպիսի խորհրդակցութիւններ եղել են և գարձեալ կը լինեն։ Այժմ մենք պրատնից աւելի ոչինչ չենք հաղորդի, այսքանը միայն կասենք, որ կատարեալ համաձայնութիւն է տիրում այդ անձինքների մէջ և որ նրանք եռանդով կընդդիմադրեն կառավարութեանը։ Բերլինում հրատարակվող «National-Zeitung» լրագիրն հետապրում են, որ պապը բողոքել է Ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների դէմ և հրամայել է իր ներկայացուցչին որ նա գոյշ լինի, չընդհատէ իր յարաբերութիւնները կառավարութեան հետ, բայց միևնոյն ժամանակ հոգևոր միաբանութիւնների անդամներին խորհուրդ չը տայ հետազոտել կառավարութեան հրամանին։ Պապի բողոքի մէջ ցաւակցութիւն է յայտնած Ֆրանսիական կառավարութենից վերջին ժամանակներում հոգևորականների վերաբերութեամբ գործ դրած միջոցների առիթով։ Պապը, ինչպէս երևում է, չէ ցանկանում, որ Ֆրանսիայի և Հռոմի դիւպլոմատիական յարաբերութիւնները ընդհատվին։ Իսկ կղերականները աշխատում են գործը այդ վախճանին հասցնել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կուբանսկի և Տերսկի հիճկալօր զունդերի գինուորներին հրամայած է այլ ևս չը գործածել ասիական ձևի հարուածող առարձանիներ։

ԹԱՐԿՈՎ, 3 ապրիլի։ Թագաւոր Կայսրը, կոմս Լօրիս-Մելիքովի առաջարկութեան համեմատ, կատարեալ ներում շնորհեց գինուորական դատարաններից դատապարտված վանեցիներով, Սուսակեանին և Զուբուկով համակրանք ուսանողներին։ Այդ ուսանողները մեծապրում էին յանցաւոր պրօպագանդայութեան մասնակցելու մէջ։ Իշխան Գօրչակովի առաջարկութեան մէջ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ Պետական բանկի 5% առմամբ առաջին շրջանի արժէք 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., նոյնքան 5% առաջին փոխառութեան առմամբ արժէք 22 ր., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան առմամբ արժէք 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 6 ր. 75 կ.։ Թուաց 1 րուբլ լէնդների վրա արժէ 25,28 պէնս, թուաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 275 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրաժադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հաւանութիւն տուեց Կարգադրող Բարձր Մասնաժողովի կարդադրութեան պօլիցիայի հսկողութեան տակ եղած և վարչական ձևով արտաքսված անձինքներին վերաբերեալ տեղեկութիւնները վերաքննելու համար։ Կարգադրութեան նպատակն է թեթևացնել յիշեալ անձինքներից, մանաւանդ ուսանողներից, նրանց դրութիւնը, որոնք նահանգապետների վկայութեան համեմատ, խոստովանեցին իրանց յանցանքը։ «Правит. Вѣстн.» հաղորդում է, որ վարչական ձևով արտաքսելու մասին Սրեպետան Սրբերի զլխաւոր նահանգապետին նոյն իրաւունքներ են տուած, ինչ որ տուած էին ժամանակաւոր զլխաւոր նահանգապետներին։ Իշխան Գօրչակովի առաջարկութիւնը առաջվայ դրութեան մէջ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ Պետական բանկի 5% առմամբ առաջին շրջանի արժէք 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., նոյնքան 5% առաջին փոխառութեան առմամբ արժէք 22 ր., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան առմամբ արժէք 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 6 ր. 75 կ.։ Թուաց 1 րուբլ լէնդների վրա արժէ 25,28 պէնս, թուաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 275 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրաժադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հաւանութիւն տուեց Կարգադրող Բարձր Մասնաժողովի կարդադրութեան պօլիցիայի հսկողութեան տակ եղած և վարչական ձևով արտաքսված անձինքներին վերաբերեալ տեղեկութիւնները վերաքննելու համար։ Կարգադրութեան նպատակն է թեթևացնել յիշեալ անձինքներից, մանաւանդ ուսանողներից, նրանց դրութիւնը, որոնք նահանգապետների վկայութեան համեմատ, խոստովանեցին իրանց յանցանքը։ «Правит. Вѣстн.» հաղորդում է, որ վարչական ձևով արտաքսելու մասին Սրեպետան Սրբերի զլխաւոր նահանգապետին նոյն իրաւունքներ են տուած, ինչ որ տուած էին ժամանակաւոր զլխաւոր նահանգապետներին։ Իշխան Գօրչակովի առաջարկութիւնը առաջվայ դրութեան մէջ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կուբանսկի և Տերսկի հիճկալօր զունդերի գինուորներին հրամայած է այլ ևս չը գործածել ասիական ձևի հարուածող առարձանիներ։

ԹԱՐԿՈՎ, 3 ապրիլի։ Թագաւոր Կայսրը, կոմս Լօրիս-Մելիքովի առաջարկութեան համեմատ, կատարեալ ներում շնորհեց գինուորական դատարաններից դատապարտված վանեցիներով, Սուսակեանին և Զուբուկով համակրանք ուսանողներին։ Այդ ուսանողները մեծապրում էին յանցաւոր պրօպագանդայութեան մասնակցելու մէջ։ Իշխան Գօրչակովի առաջարկութեան մէջ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ Պետական բանկի 5% առմամբ առաջին շրջանի արժէք 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., նոյնքան 5% առաջին փոխառութեան առմամբ արժէք 22 ր., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան առմամբ արժէք 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 6 ր. 75 կ.։ Թուաց 1 րուբլ լէնդների վրա արժէ 25,28 պէնս, թուաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 275 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրաժադրութիւնը հանգիստ է։

Կ. ՊՕԼԻՍ, 3|15 ապրիլի։ Պրիզրէնսի մօտ երեկցան այրանցի զինուորված խումբեր։ Մուխտար-փաշա դնում է նրանց տրվելու համար։

ԲԵԼԳՐԱԴ, 3 ապրիլի։ Արնաւանները մտան Սերբիա, Բուդոշինի մէջ կռուով փերցրին զէնքերի և պաշարի պահեստները։ Սերբիան Թիւրքիային եռանդոտ բողոք ներկայացրեց։

ԼՕՆԴՕՆ, 7 ապրիլի։ Այսօր Բիկոնսֆիլդ ներկայացրեց Թագուհուն իր հրաժարականի մասին խնդիրքը։ Թագուհին ընդունեց նրա հրաժարականը։

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

աւանց գէչքից չի անցկացնի, նրան կը զուարճացնեն և նրանից փողեր կը առանան։

Շուտով յայտնվեցան գլխակիները, գլուխ տուեցին և չարվեցան սեղանի չուրջը։ Ցանկութիւնը այժմ առկված էր կերակուրների քանակութիւնը աւելացնել։

Լիֆէնդին բարեհաճեց հարցնել գլխակիների առաջնութիւնը։

—Ձեր շնորհիւ ամենքս էլ լաւ ենք, պատասխանեցին նրանք։

Երբ կերան, խմեցին, կշտացան, վաւաւէն կրկին դուրս եկաւ իր թագուհի տեղից և սկսեց սեղանը հաւաքել։ Բայց արդէն մի քանի անգամ դատարկ գինետուն էր գնացել և լիքը յետ դարձել։ Բաժակները չարունակ պարզվում էին գլխակիների գլուխներն էլ ծանրացան։

—Հիմայ սկսեցէք, հրամայեց էֆէնդին։

Նրանք սկսեցին փոքրիկ խրճիթը կենդանացաւ ասիական երաժշտութեան խառնաչփոթ և աղմկալի հնչիւնների։

Լիֆէնդին գտնվում էր իր սրտի ամենաախորժ արամադրութեան մէջ։

Քանի րոպէից յետոյ արհեստաւոր Պետրոսի խրճիթի չուրջը և կտուրի վրա հաւաքվեցան գրացի կիներները, աղջիկները, և սկսեցին երիտիկներից ու քաւամուսաններից նայել, և զուարճանալ նուագածութեան ձայներով։ Ոչինչ այնքան չէ ուրախացնում գիւղացի կնոջը որպէս երաժշտութիւնը, որին նա շատ կարօտ է ինում, միայն ձմեռը հարսանիքների ժամանակ լսելու բախտ ունենալով։

Փոքր առ փոքր ամէնքս առջացաւ և աւելի բազմերեակ կերպարանք առաց։ Արաղի սրբեցութեան և գլխակիների նուագածութեան ձայների հետ միևոյն ընդհանուր խառնակութիւնը։ Ինչպէս տում են՝ գլուխ էլ իր տիրոջը չէր ճանաչում։ Ամեն մարդ գլուխը կորցրել էր։ Միայն էֆէնդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում։ Այդ միջոցին գրացի հաւաքված կիներն և աղջիկները բազմութիւնը համարձակութիւն առացաւ, և կամաց կամաց ներս մանելով, նրանք նստեցին Սուսանի և վաւաւէի մօտ, և սկսեցին այնտեղից լսել երաժիշտներին։

—Պէր, պէր, բացականչեց էֆէնդին ծափ տալով,—պէր նմ ուղում։

Այդ միջոցին գրացի Օհան, որ հաղիւ կարողանում էր իրան տաքի վրա պահել, վերկացաւ և հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, բերեց կանդնեցրեց խրճիթի մէջտեղում։ Երաժիշտները ածեցին տեղային պարի մի եղանակ։ Փոքրիկ աղջիկները մի փոքր ամաչեցին, մի փոքր կարմրեցան, մի փոքր ալնքը կարողա տանեցին, վերջապէս սկսեցին պարել։

—Շարաչ, շարաչ *) գոռում էին երաժիշտները, աւելի թունդ կերպով ածելով։

Եւ էֆէնդին գնում էր մի-մի արծաթի դրամ պարողների ափի մէջ, նրանք տալիս էին երաժիշտներին։

Պարը, որպէս սովորաբար լինում է, սկսվեցաւ փոքրիկ աղջիկներից և հետզհետէ հանդիսացան աւելի հասակաւորները։ Աւաչին զոյգը յորինելուց յետոյ իրանց ձեռքի թաչկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկայ վրա. այդ նշան էր, որ այժմ նրանք պէտք է պարէին։ Այսպէս հերթը հետզհետէ փոխվում էր, և ամեն անգամ մէջ էին մտնում մի զոյգ պարողներ։ Լիֆէնդին առաւօտեամբ լցնում էր նրանց բուռը արծաթի գլաբաշներով, և երաժիշտները նուագով ածում էին։

Հերթը հասաւ վաւաւէին։ Գնդացիկ աղջիկը

*) Շարաչ նչ. այն արծաթը, որ տալիս են պարողները հանդիսականներից և յետոյ տալիս են երաժիշտներին։

նի է որ կոմիտէտը վճարում է պալմին 200 րուբլ իւրաքանչիւր երեկոյի համար։ Այժմ, չը նայելով որ կօնցէրտը բարեգործական նպատակով էր, այն էլ յօգուտ վանի սովատանջների, կոմիտէտը չը թաւականացաւ պահանջելու իր 200 րուբլ կօնցէրտ տուղներից, այլ աւելացրեց գործնալ 100 րուբլ չան։ Բնական չէ որ կոմիտէտը մրնչ այժմ ոչինչ չը առնց յօգուտ վանի սովատանջների, բայց աշխատում է չահվել երբ ուրիշները այդ նպատակով կենդէրտ են տալիս։

գերազանցեց բոլորից իր շնորհալի պարով. նրա ամեն մէկ չարժումների մէջ նկատվում էր գրացիայ և կախարդիչ հրապուրանք։

—Մեր երկրում, խօսեց էֆէնդին, հայերի մէջ մի լաւ սովորութիւն կայ, երբ աղջիկը իր պարը վերջացնում է, մօտենում է տան պատուաւոր հիւրին, չոքում է նրա առջև, գլուխը դնում է նրա ծնկի վրա, և այնքան ժամանակ չէ բարձրացնում, մինչև նրանից մի լաւ ընծայ չէ առնում *)։

—Այդ չատ լաւ սովորութիւն է, ձայն տուեցին երաժիշտները,—պէտք է այստեղ էլ մացնել այդ սովորութիւնը։

—Վաւաւէն, դու պիտի լինես առաջին օրինակը, ասաց նրան էֆէնդին.—դէ, մօտեցիր, զաւակս։

Վաւաւէն ամօթխածութիւնից բոլորովին չը փոխվեցաւ և անչարժ մնաց իր տեղում։ Նա աւելի բարւոք էր համարում, որ գետինը պատռվէ և իրան կուլ տայ, քան թէ գլուխը մի օտար մարդու գրկումը դնէ։ Բայց ամեն կողմից նրան թմբկեցին, քաշքշեցին, առելով, գաղջի, դնա, մի ամաչիր, քեզ բան կը տայ—և վերջապէս նրան ուժով տարան էֆէնդու մօտ, և նա ստիպվեցաւ իր դնդնցիկ գլուխը դնել էֆէնդու ծնկների վրա։ Լիֆէնդին փայփայեց վաւաւէի սիրուն գիսակները և պրեց նրա ափի մէջ երկու ռուբլի։

Մինչ էֆէնդին այսպիսի քէֆերով էր զբաղված, նրա մտաւ նրա զաիիխանիներից մէկը, մօտեցաւ, և ականջին ասաց. «այն մարդին, որի համար պատուիրած էիր, գտանք»։—«Բերեցէք, և ամենայն զգուշութեամբ պահեցէք, մինչև ես առաւօտեան

*) Հայաստանում ոչ մի տեղ չը կայ այսպիսի սովորութիւն. միայն ասիական բօչանների տզաները և Լիֆէնդները պարելու ժամանակ գործ են ածում այս տեսակ հրապուրիչ ձևեր հանդիսականներից փող առանալու համար։

կարգադրութիւն կանեմ, հրամայեց էֆէնդին անլսելի ձայնով։

Զափթիան հեռացաւ։

Ինչ մարդու համար էր այդ կարգադրութիւնը,—ոչ ոք չը հասկացաւ։

Արդէն գիշերից բաւական անցել էր։ Արհեստաւոր Պետրոսի խրճիթը փոքր առ փոքր դատարկվեցաւ։ Երաժիշտները հեռացան։ Դրացի Օհօն արթնացութիւնից բոլորովին անգգայ իր տունը տարան։ Բազմութիւնը ցրվեցաւ։

Արհեստաւորի խրճիթի մէջ մնաց միայն պատուելի հիւրը գրկելի հետ, որը այնքան խմել էր, որ ուշնացած մի հատիկ աչքն էլ ոչինչ չէր տեսնում։ Սուսանը անկողին պատրաստեց էֆէնդու համար, ձրագները հանգցրին և բոլորը հանգստացան։

Այն գիշերը ինչ էր պատահել,—Աստուած գիտէ։ Բայց առաւօտեան վաւաւէն չատ տխուր էր, և արտասուքը խեղճ աղջկայ աչքերից մի քանի օր չէր դամաքում...

Նոյն գիշերվայ առաւօտեան պահուն, զեռ լոյսը չը բացված, այս գիւղի մէջ կատարվեցաւ մի ուրիշ ցաւալի անցք. մի երիտասարդի չղխանով կապած, տարան դինուորական գործակատարի մօտ, որ նոր եկել էր այս կողմերում պատերազմական կարգադրութիւնների համար։

Դիւզացիներից ոչ ոք չը տեսաւ նրան,—միայն Թամաս էֆէնդին խաւարի միջից, նրա ետևից նայելով, մի առանձին դիւական հրճուանքով աւում էր իր մաքում. «գնա այսուհետև, ուրան կարող ես, փչիր քո ղուդուկը...»

Այդ երիտասարդը պ. Դուդուկեանն էր, կամ մեր այժմեան պ. Ալմանը։

(կը շարունակվի)

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուբա եկաւ մամուլի տակից և ծախվում է թէ կենտրօնական և թէ Ջ. Գրիգորեան-ների գրավաճառանոցներում և պ. Մուսուրեան-ի խանութում «ՔԻԹԻՒԱՆԻ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Աբծրունուոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particuliers sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

3—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՑԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԸՆՓՓԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրուած երեսներ: Ամէն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունւում:

Ստորագրվել կարելի է ԿԱՐՍՈՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՑՔԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՓԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մրչակի» խմբագրատանը Յ. ՄԻԼԻՒՐ-ՅԱԿՈՒՆԵՑՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ գեղեցիկ Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պատիւը գանվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Գ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳՕԱԳԵՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գալովինսկի պրօսպեկտի վրա, Մուխրանովոյ տանը, Կուրի տակ, առաւօտեանները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տներում: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

10—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Ջ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ընտանի—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:

2. Դօկտօր Մօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:

3. Ֆրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:

4. Պուհատեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:

5. Գոմատո-Րաթիպայ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:

6. Նոյնը կազմած — 25 կ.:

7. Անվճռ փհվեքօվ Հայիկեանցին փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Պատմէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Լատալիան. Տաբօնայ ձերը: Ը. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

9—10

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիտնագէ Տաւիղ» Ֆրէյդունի պրօյկր պ. Ջ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Պրօյկրի գինն է 30 կ., գնաւոր-ներից յանկացողները կարող են ուղղակի դիմել Գ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ խլման ՍՈՒՄԲԱՑՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекария) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով: Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են տանուլ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվին ամենայն ճշտութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: Կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ՎԿԱՅԱԿԱՆ ունի և խմբանում է ԹԻՒՄԱՆ, ՖՐԱՆՍԻՍԻՆ են ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները **ԴԱՍԵՐ Է** փնտռում: Հասցէն **ԿԱՄԵՆԴԱՆՏԱԳԱՅԻ** փողոց, տան ՇԱՒՈՒՐՈՒԱԴՈՎԻ, № 23:

1—4 (2)

Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ «Թանդոյեանց» օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը, տալիս է կատարեալ նոյն ուսումնարանական կրթահիներըը և անհանգիստները: Պայմանաթուղթը կարելի է կարդալ նոյն ուսումնարանում ամէնայն օր, իսկ ընդունելութիւնը կը լինի ամսոյս 24-ին առաւօտեան 10 ժամին:

1—2

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Ինքնակրթութեան հայերէն գրքերի հրատարակութեան կանոնագրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւաքալեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

8—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ձշմարտութեան) Պրէսկօտի, «Արքայ Լինկօլն» սորուկներին ազատող Վիկտէմ Հօգիմանի, և Մօլիէրի «Մուսաց ացօղներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումն Մօլիէրի հետ ճարտարութեամբ կամ Կերպասուորը և «Կին գիտուն» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՑ ԳՐԻԳՕՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ ես թէ ինձ որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՑ ԹԻՒԸ, իմ ներան տուած տուհանակներ (росписки) մանաւոր և բանկային վէկսէլներ, և բոլոր ասրիշ պարտատէրհանգներ և ակտեր, ես անպատճառ եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԳԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՕՎ:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՒԱԽՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գաւբօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Յօսէֆ կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խերուբդիական հ., Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Էֆյխ աչքի հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեատօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շահէյմրօսկի վիներական և կաշու հ., Ասատուատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թօմէնանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խերուբդիական հ., Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Էֆյխ աչքի հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեատօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շահէյմրօսկի վիներական և կաշու հ., Ասատուատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թօմէնանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Ուրբաթ. Գաւբօնսկի կանանց հ., Գալեանց ատեղ. Լիսիցեվ ներքին հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ասատուատուրօվ վիներական և կաշու հ.:

Շաբաթ. Գաւբօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Յօսէֆ կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խերուբդիական հ., Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Էֆյխ աչքի հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեատօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շահէյմրօսկի վիներական և կաշու հ., Ասատուատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թօմէնանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Ուրբաթ. Գաւբօնսկի կանանց հ., Գալեանց ատեղ. Լիսիցեվ ներքին հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ասատուատուրօվ վիներական և կաշու հ.:

Շաբաթ. Գաւբօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Յօսէֆ կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խերուբդիական հ., Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Էֆյխ աչքի հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեատօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շահէյմրօսկի վիներական և կաշու հ., Ասատուատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թօմէնանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց խերուբդիական և աչքերի հ., Շահմրօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Ուրբաթ. Գաւբօնսկի կանանց հ., Գալեանց ատեղ. Լիսիցեվ ներքին հ., Բախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ասատուատուրօվ վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ապրատ հիւանդներին ամէնայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեան օրերին այդտեղ հիւանդները բժշկանոցի առմամբով ընդունում է ամէնայն օր, ամէնայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամէնայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտօր Լիսիցեվ:

Տպագրան Ա. Ա. Միխելսոնի

Дозволено Цензурою 8 Апрѣля 1880 г. Тифлисъ.

Типографія А. А. Михельсона.

Fonds A.R.A.M

№ 60 Ապրիլի 10 (22) **1880** Ապրիլի 10 (22) № 60

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի կէս տարեկանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Ծանուցմունքներ գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Նամակները պիտի ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տան տէրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է տանը և փոստով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի համալսարանի մասին.—Ներքին առաջին Մ. Միանասեանց։ Հնագիտական ժողովի նամակ Հին-Նախիջևանից։ Նամակ Կոպրիից։ Նորութիւն տարբեր—Ազատութիւն առաջին Թիւնիս։ Գերմանիա—Աշակերտ հետազօտները—Յայտարարութիւններ—Տնտեսական խնդիր։

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սա մի անհերքելի ճշմարտութիւն է, որ մեր կեանքը կամ մեր մահը բացարձակապէս կախում ունի մեր լուսաւորութիւնից կամ մեր տգիտութիւնից. ուսումն ու լուսաւորութիւնը մեզ համար մահու ու կենաց խնդիր է։ Այս ճշմարտութեան համոզված է պրեթէ ամեն մի հայ, այնպէս որ վստահութեամբ կարելի է պնդել թէ Անատոլիայի մէջ գտնվող հայ ազգը ունի այս համոզմունքը։

Մեզ շրջապատող և մեզ դրացի եղող ազգերից ոմանք այս ճշմարտութիւնից շատ խորթ են, ու ունեն նոր են արթնանում, և գորանք դեռ տեսակ տեսակ պատմական փորձառութիւններով, թագրութեանց, առեւտրականութեանց, դպրոցաց և ուրիշ ձեռնարկութեանց միջոցներով պէտք է տասնամեակներով աշխատեն ջանք անել, որ այդ ճշմարտութիւնը իրանց մէջ տարածեն և ամեն մէկին ըմբռնել տան, թէ ուսումն ու լուսաւորութիւնը մեզ համար մահու և կենաց խնդիր է։

Մեր այդ համոզումը մեզ համար մի անգին առաջնութիւն, մի մեծ դրամագլուխ է, որ եթէ ուղիղ և նպատակայարմար կերպով առաջնորդվի և զործադրվի, անհամար բարի արդիւնքներ և հետևանք կունենայ, որովհետև միշտ պիտանը, ուսեալը, կրթեալը, լուսաւորեալը բարձր է լինելու տգէտիցը, անուսիցը, ամբիկիցը։ այս խօսքը ճշմարիտ է թէ կուզ անհատի նկատմամբ, թէ կուզ ազգի նկատմամբ։

Թէպէտ և մի Կովկասեան համալսարանի համար շատ անդամ էր խօսք ու զրոյց եղել, բայց վերացականութիւնից իջնող ու իրականութեան դաշտում առաջին բայլն առնողը եղաւ, ինչպէս որ բնականաբար էլ պէտք էր լինէր, Թիֆլիսը, որ, արդէն յայտնի է, 100,000 ր. և կառուցման տեղ է խոստանում, եթէ համալսարանը կը շինվի Թիֆլիսում։

Մեր նպատակը չէ առ այժմ յայտնել ու բացատրել այն մեծամեծ օգուտները որ կովկասեան համալսարանը կարող է ունենալ ամբողջ տէրութեան համար. Հնարաւոր է որ մեր ազգի միայն յիշեմ այն հանգամանքը թէ արևելեան լեզուները՝ հայերէնը, վրացերէնը, թուրքերէնը, պարսկերէնը, արաբերէնը, քիւրդերէնը որքան դիւրին կարող են սովորվել բուն իրանց հողի վրա՝ իր մայրենի ընտանեաց մէջ, քան թէ Մոսկվա, Կազան, Պետերբուրգ, ուր որ մէկ տասը տարի ընթացքում ուսանողի կամ ուսուցանողի ականջը հազիւ թէ մէկ բառ լսէ այն լեզուներով. այդ կենդանի լեզուները սովորվում են այն ճեմարաններում իբրև մեռած լեզուներ։ Ու բաց ի դմանէ հէնց հիմա են սկսում այս ազգերը իրանց անցեալովն ու ներկայովը, իրանց լեզուովն ու պատմութիւնովը, իրանց աւերակներովն ու հնութիւններովը Եւրոպային և Հարկաւ նախ և առաջ Պետերբուրգին հետաքրքրել։ Այս և սորա պէս հարիւր ու մէկ ուրիշ խնդիրները թողած, ասում եմ, խորհենք թէ ինչ կերպ անել պէտք էր, որ Կովկասեան համալսարանը գոյութիւն ստանար։

Թէ մենք հայերս մի այդպիսի բարձրագոյն ուսումնարանից յանչափ պիտի օգուտ քաղէինք, դրան տարակոյս չը կայ։ Մեր որդիքը ստիպված չէին լինի հիւսիսային ցրտերում իրանց փափուկ կեանքը վտանգի ենթարկել. նորա ստիպված չէին լինի ծնողական վայրից և ընտանիքից մեռերմութեան կապերը կտրել, և այլն և այլն շատ երևանցի, ալէքսանդրապօլցի, շուշեցի, բագուցի և այլն դիւրութիւն կունենար իր որդուն բարձրագոյն ուսում տալ։

2—40

ՎԵՐՋՆՅԱՆ ՎԱՃԱՌՈՒԻՄ

Հրացաններ, բեմզիրներ, պանակներ, պրէչներ, անուշահոտութիւններ, ատպան, դուլպաներ, Թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

10—20

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԻՒԼԻՒ ՀԵՆՐԻՒ ՅԻՄԵՐՄԱՆԻ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇՈՅ ՄՕՐՍԿՈՅ, № 42

Ազատվում են արտասահմանի ամենալատ գործարաններից ներկրուած տարբեր երաժշտական գործիքներ:

ՉՈՒՒԹԱԿՆԵՐ 2½ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., 1½ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐՊԵՋՆԵՐ 2½ ր., 5½ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին խոպանական և գերմանական չուխակներ մինչև 600 ր.: ՉՈՒՒԱԿՆԵՐ փոքր գիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Չուխակի չհոլա (ինքնաուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՅԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիոլօնչելի չհոլա 4 ր.: ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Դիտարի չհոլա (ինքնաուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՅԻՏԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Յիտարի չհոլա 2 ր., 3 ր. 50 կ., Նօտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իրաքանչիւր տետրակը: ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չհոլա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար. ԿԱՄԵՐՏՕՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր., 6 ր.: Սուրդին կանիֆոլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ձուլուած ՊԻՒՊԵՏՐՆԵՐ 5 ր.: Երկաթի ձուլուած պիւպետներ մետակաչներով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գամմներից չհոլա և նօտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իրաքանչիւր տետրակը: ՆՕՐՆՊԻՊԱՍՊԻՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Շհոլա (ինքնաուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏՕՐՆ, ՆՇԱՆԱՓՈՒԼԼԵՐ, ՏՐՕՄՐՕՆՆԵՐ, ՖԼԻՑՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Շհոլա (ինքնաուսուցիչ) 1½ ր., և 3 ր., Նօտաներ 40 կ., 1½ ր., 3 ր. իրաքանչիւր տետրակը: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կարնեսի չհոլա 4 ր., Բհոլո, Զականի, Ֆաժօլետներ: Անգլիական ՊՕՆՅՈՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Շհոլա 3 ր., Նօտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1½ ր., Գերմանական կնցնեբտիս 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Շհոլա (ինքնաուսուցիչ) 75 կ., Նօտաներ 40 կ., և 1 ր. իրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԼԻՊԳԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԻՑՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր. ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԻՐՄԱՐ ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Խոպանական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ Թուչունների համար 10 ր., 15 ր.: Փիտանկներ, լիտաւրներ, բանչուկներ, բանգօներ, մետալական չրխունչների բերկաներ, հասնիներներ, պարմաններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և հնդումիասր: Հանապարհածախսը գնողին է վճարվում են հասով և մեծ քանակութեամբ:

1—1

Имѣется въ продажѣ: Описаніе Тифлисскаго Ботаническаго сада, составленное Директоромъ его Г. Радде. Желающіе могутъ получить его въ Конторѣ Редакціи «Кавказскаго Календаря», Ц. театръ, Закладскій переулокъ (Хорашенская часть Тифлиса) 5 минутахъ отъ Ш. Шахтахтинскаго. Цѣна 35 коп. съ пересылкой наложеннымъ платежемъ 20% уступки не дѣлаетъ.

Имѣются въ Ред. Кав. Ц. театръ, Закладскій переулокъ (Хорашенская часть) и Книгахъ и бюро Ц. театръ. Закладскій переулокъ: Вновь вышедшій второй выпускъ Путеводителя по Тифлису, составленный Директоромъ Ботаническаго сада Г. Радде. Желающіе могутъ получить его въ Конторѣ Редакціи «Кавказскаго Календаря», Ц. театръ, Закладскій переулокъ (Хорашенская часть Тифлиса) 5 минутахъ отъ Ш. Шахтахтинскаго. Цѣна 35 коп. съ пересылкой наложеннымъ платежемъ 20% уступки не дѣлаетъ.

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

10—20

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ „**Сборника свѣдѣній о Кавказѣ**", изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«ТИФЛИСЪ ПО ОДНОДНЕВНОЙ ПЕРЕПИСИ 25-го МАРТА 1876 Г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шарлеу (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Береншгама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 24 Іюня 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 108 Յունիսի 26 (Յուլիսի 8) 1880 Յունիսի 26 (Յուլիսի 8) № 108

ԻՆՆԵՐՈՐԴՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարեվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպեկով։

Ձերբերում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յատկապատգարակը գիտում են ուղղակի
Թիֆլիս. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Նոյն կիրակի և օրն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառն 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական ժամանակները—Ն. Ե. Քրքէն ամառանոցը Ջանկալի փոփոխութիւն։ Նամակ Մրխայիլից։ Նամակ Աստրախանից։ Նամակ Խրտգրմից։ Վերջին լուրեր— Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա—Սչակից հետագիրներ—Յայտարարութիւններ— Բաղաքացիական Սովը Հայաստանի մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Անցեալում անգլիական պարլամենտում պատահեց մի անցք, որ իր վրա ոչ թէ միայն անգլիական հասարակական կարծիքի ուշադրութիւնը դարձրեց, այլ և ամբողջ Եւրոպայի։ Նա այդ անցքն է։

Հանգրների ժողովի մի պատգամաւոր, այն է Նորտամպտոնի պատգամաւոր պ. Բրէդլո (Bradlaugh) չէր համաձայնւում կրօնական երդում տալ, այլ պահանջում էր որ իրան թոյլ տային եղդիլ բացարձակապէս, այսինքն հասարակ կերպով յայտնել իր հաւատարմութիւնը առանց երդվելու մի որ և է կրօնական գրքի վրա։ Բրէդլո պատգամաւորը պատկանում է անգլիական հանրապետական կազմակերպութիւնին, իսկ իր հանգամանքով անհաւատ է համարւում, այսինքն չէ պատկանում ոչ մի կրօնական ազգա-

պին ոչ մի եկեղեցուն։ Բրէդլոի այդ պահանջը մեծ վիճաբանութիւններ յարուցեց համայնքների ժողովի մէջ։ Ընդդիմադրական կուսակցութիւնը և նրա առաջնորդ սրբ Ստաֆֆորտ Նորթկոտ պահանջում էին որ Բրէդլո անպատճառ երդում տայ, եթէ ոչ նա պատգամաւոր չը պէտք է դնդունվի և իրաւունք չը պիտի ունենայ նստել հասարակաց հանդիպների ժողովի նստարանի վրա։ Գլադստոն և նոր մինիստրութիւնը պաշտպանում էին Բրէդլոին։ Առաջին միտքը մի երկար ճառ տանց, որի մէջ բացատրեց երդման պատմութիւնը Անգլիայում։ Կրօնական երդումը առաջ մատչելի էր միմիայն անգլիկաններին, այսինքն Անգլիայում տիրապետող եկեղեցուն պատկանող անդամներին, յետոյ երդման ձևը յարմարեցրին կաթոլիկներին, ժամանակով նրան մատչելի դարձրին և ընդքանուր այլ և այլ տարանդների ներկայացուցիչներին, — վերջապէս և հրեաներին թոյլ տուեցին իրանց կրօնական երդումը յարմարեցնել ընդհանուր քաղաքական երդմանը, իսկ այժմ ինում է դարձեալ մի քայլ անել քաղաքական և կրօնական համերաշխութեան

ճանապարհի վրա, այսինքն թոյլ տալ և անհաւատներին իրանց ձևի երդում տալ։ Ժողովրդը բնաբել է Բրէդլո պատգամաւորին, ասել Գլադստոն. և մենք իրաւունք չունենք նրան չընդունել, իրաւունք չունենք թոյլ չը տալ նրան այս կամ այն կերպ երդում տալու, հաւատացող է նա թէ անհաւատ է, մեզ փոյթ չէ. մենք մտրդկերանց կրօնական համոզմունքները քննադատելու համար կանչված չենք այստեղ, այլ երկրի քաղաքական ներկայացուցիչներ ենք։

Գլադստոնի ճառը ահագին տպաւորութիւն գործեց, մեծամասնութիւնը ոգևորված կերպով ծափահարում էր նրան, բայց այնու ամենայնիւ, երբ քուէարկեցին ինդիրը, մեծամասնութիւնը հակվեցաւ ընդդիմադրութեան կողմը։ 275 ձայն 230 ձայնի դէմ վճռեցին, որ Բրէդլո, եթէ կամենում է պատգամաւոր ընդունվել, պէտք է կրօնական երդում տայ, և նրան մերժեցին փոխարինել կրօնական երդումը քաղաքական երդումով։ Նշանակում է որ մեծամասնութեան հետ միացան մի քանի իրլանդացիներ, մի քանի մոլեռանդ կաթոլիկներ, որոնք ուրիշ հարցերի վրա հակառակ են ազգային կուսակցութեան։

Բրէդլոի գործը ահագին նշանակութիւն ունի, մեծամասնութիւնը ոգևորված կերպով ծափահարում էր նրան, բայց այնու ամենայնիւ, երբ քուէարկեցին ինդիրը, մեծամասնութիւնը հակվեցաւ ընդդիմադրութեան կողմը։ 275 ձայն 230 ձայնի դէմ վճռեցին, որ Բրէդլո, եթէ կամենում է պատգամաւոր ընդունվել, պէտք է կրօնական երդում տայ, և նրան մերժեցին փոխարինել կրօնական երդումը քաղաքական երդումով։ Նշանակում է որ մեծամասնութեան հետ միացան մի քանի իրլանդացիներ, մի քանի մոլեռանդ կաթոլիկներ, որոնք ուրիշ հարցերի վրա հակառակ են ազգային կուսակցութեան։

Բրէդլոի գործը ահագին նշանակութիւն ունի, մեծամասնութեան հետ միացան մի քանի իրլանդացիներ, մի քանի մոլեռանդ կաթոլիկներ, որոնք ուրիշ հարցերի վրա հակառակ են ազգային կուսակցութեան։

գործել մինչև անգամ ամենատար պաշտօնների մէջ, գայ-լագամի կամ միւրիսի պաշտօնի մէջ երբեք մի հայեն չէ նշանակում, չէ սանձահարում պաշտօնեաների կամայականութիւնը և կաշառակերութիւնը, նոր և տրդար օրէնքներով չէ կարգադրում հողային յարաբերութիւնները Հայաստանում, ուշադրութիւն չէ դարձնում ծանր և անտանելի հարկերի վրա,—և այդ բոլորի հետևանքը այն է լինում, որ հայ ազգաբնակութիւնը անտեսական և վարչական ճնշման տակ թուլ նուազում է, գիշացին կամ դաղթում է իր հայրենիքից, կամ թոշնում է իր դիւղական կեանքը և ապատանվում է քաղաքներում, որտեղ պիտում է պարապել արհեստներով և մանրավաճառութեամբ։ Այդպիսով հայը, ոչ թէ իր սեփական կամքով, այլ հանգամանքների չնորհով, արտաքսական ճնշման պատճառով զաւականում է իր կեդմանը, գիւղական կեանքին, երկրագործական պարապմունքին և զառնում է վաճառական,—և հողը Հայաստանում գրկվում է իր աշխատաւորի և ընտանեկան մշակներից։ Եւ վաճառականութեամբ պարապողները գէտ ամենաերջանիկ են, իսկ մեծ մասը գիւղացիների գնում են կ. Պոլիս և ուրիշ քաղաքներ համալսարիւն անելու, և ամենամեծ աշխատաւորներն են յանձն առնում։

Մենք այդ բոլորը տեսնում ենք և ասում ենք որ Թիւրքաց կառավարութեան այդ տեսակ վարմունքը հայի հետ անհոգութիւն, անհետաքրքրութեան և անբողոքնակութեան արդիւնք է։

Բայց մանաւանդ վերջին տասնամեակի ընթացքում Թիւրքիայի հայերի վերաբերու-

Fonds A.R.A.M

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

I.

Թիւրքաց Հայաստանի սահմանագլխների դրութիւնը։—Որտեղ է աւելի տարածված սովը։—Տեղեկութիւններ Կ. Պոլսի կենտրոնական մամուլից։—Սովի պատճառական պատճառներ, որոնք բնականաբար երևոյթներ և հացի պաշարի սպառվելը Հայաստանում մինչև վերջին պատերազմը և պատերազմից յետոյ։—Հարկեր։—Թափառական ցեղերը և ասպատակութիւնները։—Մշտական պատճառներ, հողային յարաբերութիւններ և բէկերից կախված լինելը։—Հանգամանքների բացատրութիւնը։—Հարերի թէ պակասը և գաղթականութիւնների պատճառները։—Կոլերն և մեռելների վերջնական շրջաբերութիւնից, հաց բերելու արգելքը և այլն։—Կ. Պոլսի և վանի մամուլ-ժողովները։—Եւրոպացիներից եկած օգնութիւնը։

—

Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնից միայն հայ աւարըն է աշխատասէր և արդիւնաբերող։ Թիւրքը ծոյլ և անհոգ է, քիւրդը յափշտակիչ և ձրիակեր է։ Բայց պետական հարկերի ամբողջ ծանրութիւնը հայերն են կրում։ Բացի սրանից, թէև քրիստոնեաները Թիւրքիայում հողի սեփականութեան իրաւունք ունեն, բայց իրապէս թէ յափշտակութեան, կամայականութեան և թէ թիւրք ու քիւրդ կալուածատէրերից կախված լի-

*) Տես «Մշակ» № № 72, 73, 74, և 75, 1879.

րել է, բայց պարլամենտը նրան չէ թոյլ տալիս պատգամաւոր համարվել մի և նոյն ժամանակ իրաւունք չունենալով նրան բոլորովին հեռացնել։ Բրէդլօ կրկին տեղ է բռնել նստարանների վրա, բայց իրաւունք չունի ոչ խօսել, ոչ քուէարկել։

Այդ դրութենից դուրս գալու համար մի միջոց կայ միայն.—և այդ շատ լաւ են հասկանում իրանք անգլիացիները,—հարկաւոր է հրատարակել կրօնական կատարեալ ազատութիւն և համբերողութիւն երդման օրէնքի վերաբերութեամբ։

Բրէդլօի անցքը դեռ մեծ հետեւանքներ կունենայ և մի նշանաւոր դարագլուխ կը համարվի անգլիական պարլամենտական կեանքում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՆԿԱՒԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Այս տարվայ գարունը նոր շունչ, նոր կեանք պարգևելով բնութեանը, պարգևեց և Ռուսաստանին մի բարերար փոփոխութիւն, ընծայեց կայսրութեան բոլոր հպատակ ազգերին մի կենդանարար և վաղուց ցանկալի շնորհ։ Ամբողջ ռուս մամուլը — հասարակութեան ձայն և ներկայացուցիչը — մի առանձին ուրախութեամբ լսեց ազգային լուսաւորութեան մինիստր կոմս Տօլստոյի փոխված լինելու լուրը։ Ոչ ոք չէր աշխատում ծածկել իր սրտի խորին բերկրանքը, ցնծում էին բոլորը։ Ռուսաստանի ամեն մի ծայրում տօնում էին այդ պանծալի ազգային տօնը. հազարաւոր ծնողներ աչքերից էին կարդում, շնորհաւորում էին մէկ մէկու այդ ընդհանուր բաղդաւորութիւնը։ Ուրախ էին փոքրիկ երեխաներ, ուրախ էին պատանիներ, ուրախ էին ուսանողներ — ուրախ էր ամբողջ ռուս հասարակութիւնը։ Տխուր էին միայն նախկին մինիստրի խնամակիցները, որոնց պարագլուխն է ամեն մի առողջ մտքի և կենդանի սկզբունքի անհաշտ թշնամի Կատկովը, այն հանրածանօթ յետադէմ պուբլիցիստը, որ յամառութեամբ կռւում է ամեն մի նոր յառաջադէմ փոփոխութեան դէմ, որ վաղուց արդէն վայելում է հասարակութեան լուսաւորված դասի համակրութիւնը, որին, փակածբում տալով, ռուս պատմաբան Իլովայսկին չամաչեց խցկել իր դասագրքի մէջ, ինչպէս երևելի պուբլիցիստի, մի ընդհանուր ծիծաղ յարուցանելով մամուլի մէջ։ Այդ այն Կատկովն է, որ իր թևերի տակ հովանաւորված Լիւբիմովի և սրա նման ազգութեան փառք ու պարծանք պարոնների հետ ահագին ազդեցութիւն ունէր կոմս Տօլստոյի գործունէութեան վրա, ինչպէս գեղեցիկ կերպով ապացուցանում է «Голосъ» լրագիրը։ Շատ բնական է ուրեմն, որ մինիստրութեան փոփոխութիւնը չէր կարող դուր գալ կոմսի համախոհ աջակիցներին։ Շատ հասկանալի է նոյնպէս հասարակութեան ուրախութիւնը այդ փոփոխութեան պատճառով։

Պարզ է այստեղից, որ հասարակութիւնը բնականապէս պէտք է սպասի նոր մինիստրութիւնից բոլոր այն վերանորոգութիւնները, որոնք կարողանային համապատասխանել կեանքի նոր պայմաններին, նոր պահանջներին։ Նոր մինիստր պ. Սաբուրովի ծրագիրները ցոյց են տալիս, որ հասարակութիւնը կարող է յոյս ունենալ հասնելու իր ցանկացած նպատակներին։ Ինչպէս հաղորդում են լրագիրները նոր մինիստրը չէ ընդունել իր նախորդի ծրագրած համալսարանական նոր կանոնագրութիւնը և կամենում է մինչև անգամ տալ համալսարանական ուսանողներին կորպորատիւական կազմակերպութիւն, մի փոփոխութիւն, որ վաղուց արդէն կազմում է ուսանող երիտասարդութեան նուիրական ցանկութիւնը, որ ամենալաւ միջոցն է վերջ տալու ուսանողների մէջ պատահող յաճախ խառնակութիւններին։ Չէ կարելի ուրեմն չը յուսալ, որ նոր մինիստրութիւնը կը մտցնի նշանաւոր փոփոխութիւն և կլասիկական սիստեմի մէջ, այնպիսի փոփոխութիւն, որ կարող լինի լրացնել հասարակութեան պահանջը, կարողանայ ապահովել հազարաւոր երիտասարդների ապագան։

Ս. Դաղեանց

ՆԱՄԱԿ ՄԻԽԱՅԼՕՎԻՑ

Մայիսի 16

Շնորհիւ «Մշակ» լրագրի, Հայաստանի սովատանջների յուսահատ ձայնը մեր ականջին էլ հասաւ, հետեւապէս յիշեցրեց մեզ էլ մեր անհրաժեշտ պարտաւորութիւնը—այն է կարեկցութեան ձեռք մեկնել դէպի մեր թշուառ հայրենակիցները սովի անողոք ճանկերից ազատելու համար, որին ամենայն իրաւամբ կարելի է դասել մարդկութեան ամենամեծ պատուհասների շարքումը։ Այդ իսկ նպատակով առաջարկեցի մի ստորագրութիւն բանալ յօգուտ սովեալների, նախ այստեղ Միխայլովի մէջ, երկրորդ անգամ Ախալցխայում, ուր գնացած լինելով մասնաւոր գործերովս առիթ ունեցայ գտնվել պարոն Մինասեանի տանը հարսանեաց խնճոյքին, որտեղ ներկայ եղող հիւրերը սիրով ընդունելով իմ հրաւէրս, չը խնայեցին իրանց նուէրները տալ յօգուտ սովատանջ եղբայրների։

Այժմ ուղարկելով ձեզ, պ. խմբագիր, այդ երկու ստորագրութեան գումարները, խնդրում եմ հասցնէք ուր հարկն է և բարեհաճէք տպել նուիրատուների անունները ի միամտութիւն նոցա։ Առաջի ստորագրութիւնից գոյացաւ 70 ր. և 10 կ., իսկ երկրորդից (Ախալցխայում) 30 ռուբլի 25 կ., բոլոր միասին կանէ 100 ր. 35 կ.։ Ստորագրութիւնը շարունակվում է. փօստի ծախսը վճարեցի ես. Միխայլովի ստորագրութիւնը. անուն և ազգանուն ստորագրողների։

Մկրտիչ Կարապետեան 10 ր., Մովսէս Չիֆտալարեան 10 ր., Ստեփաննոս Սլօյմնեան 10 ր., Մարգար Յօվհաննէսեան 3 ր., Գրիգոր Վանցեեան 3 ր., Туровъ (հայ) 5 р., Дзодзіевъ (օս) 1 р., Саруханъ-бегъ (հայ) 2 ր., Межсобовскій (հրէայ) 3 ր., Կարապետ Մնացականեան 1 ր., Յօվհաննէս Սահակեան 1 ր., Պօղոս Ներսէսեան 2 ր., Յարութիւն Առիւծեան 5 ր., Ադամպայ Մխիթարեան 1 ր., Մկրտիչ Ղալամքարեան 2 ր., Բագրատ Պիճիկեան 2 ր., Գէորգ Վարդանեան 1 ր., Զաքար մահտեսի Նազարեթեան 1 ր., Գրիգոր Ալվազեան 1 ր., Սերգօ Վարդանեան Յարութիւնեանց 2 ր., Յօվհաննէս Անդրէասեան 2 ր. 60 կ., Մանուկ Փափիկեան 1 ր., Սարգիս Նազարեան 50 կ.։ Ընդամենը 70 ր. 10 կ.։

Ախալցխայի ստորագրութիւնը. անուն և ազգանուն ստորագրողների։

Ազնիվ Սլօյմնեան 1 ր., Ստեփաննոս Սլօյմնեան 3 ր., Մարտիրոս Սլօյմնեան 3 ր., Աէքսանդր Սլօյմնեան 1 ր., Վաղարշակ Սլօյմնեան 1 ր., Առաքել Մելքոնեան 2 ր., Մելքոն Անիսոնեան 1 ր., Մկրտիչ Մուրադեան 1 ր., Յարութիւն Ղազարեան 1 ր., Սիմօն Ռաֆայելեան 50 կ., ՈՄ 50 կ., Տ. Գոլոսէնի Մելքոնեան 2 ր., Տ. Մարիամ Մելքոնեան 3 ր., Տ. Գայանէ Սլօյմնեան 2 ր., Տ. Եղիսաբէթ Սլօյմնեան 2 ր., Օր. Կատարինէ Սլօյմնեան 1 ր., Տ. Աննա Ղանթարճեան 1 ր., Տ. Փերրոնիա Մինասեան 2 ր., Տ. Եղիսաբէթ Գեամճեան 50 կ., Տ. Ջանազան Մուրադխանեան 50 կ.։ Սեդրակ Մելքոնեան 1 ր., Տ. Հռուսմի Թադէեան 25 կ.։ Գումարն է 30 ր. 25 կ.։

Ստեփաննոս Սլօյմնեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Մայիսի 1-ին

Դարձեալ աղաներ, զարմանալի է մեր հասարակութեան ազգասիրութիւնը, զարմանալի է նորա քննող բնաւորութիւնը. ժողովներում ոչ ոք չէ խօսում, եթէ ոչ աղան, ոչ ոք չէ առաջարկում ազգային հոգաբարձուի կամ երեցփոխանի համար կանդիդատ, եթէ ոչ աղան։ Աղան հարուստ է, աղան փող ունի, հետեւաբար խելք էլ ունի։ Աղան առաջարկում է այս կամ այն մարդու անունը նշանակելու ընտրութեան համար, որի ամեններն չը գիտէ գործին ընդունակ լինելը, և ահա միացեալ բազմութիւնից ամեն մէկը ականջները սրած պատրաստ կանգնած են աղայի կամքը կատարելու, նորա ակնարկած մարդուն ընտրելու։ Յանձնաժողովի անդամներ են ընտրում, մէկ էլ տեսնես աղան, առանց երկար մտածելու, առանց նայելու բազմութեան ձայնին կամ կամքին, ձայն է տալիս երկու կամ երեք մարդկանցից, էլ, պարոններ, ձեզ ենք նշանակում յանձնաժողովի անդամներ այս ինչ հոգաբարձութեան կամ այն ինչ երեցփոխանի հաշիւները տեսնելու։ Եթէ այս ընտրվածներից մէկը բացասում է, թէ այդ իմ գործս չէ, իսկոյն աղան առաջը փակում է. լաւ, լաւ, ասում է, ահա քեզ այս խանութպանը, այն գրագիրը օգնական։ Ահա քեզ, ընթերցող, մեր ժողովների համառօտ նկարագիրը, միացեալ ժամանակն էլ անցնում է անօգուտ վէճերով, առանց միմեանց միտքը լսելուն հասկանալու։ Հասարակութեան, ընդհանրութեան կողմը պաշտպանող չը կայ։ Աղայի կողմն էլ պէտք է պաշտպանել, որ տակաւին փող է տալիս, որ հարուստ է, ամեն տեղ խօսքը առաջ է, նեղ օրին պէտք կը գայ, իսկ հասարակութեան կողմը ինչու է պէտք պահել, նա խօ անձնաւորութիւն չէ, նա վերացականութիւն է. և խիստ աչքի հասարակութիւնը Աստրախանի մէջ վերացականութիւն է, որովհետև նա ամբողջապէս կազմված է մէկը միւսի հետ կապ չունեցող անհատներից։ Մենք այնքան անմիտ իրեղներ ենք, որ եթէ պատահի, մէկը մեզ ընդհանրապէս, այսինքն հասարակութեանը հազարներ վնաս հասցնէ, մենք ամեններս չենք հոգալ, այնպէս հանգիստ կը լինենք, որպէս թէ տասն հազարներ օգուտ ենք ստացել, այս ինչ նոյն մարդը, եթէ մի կոպէկի կամենայ վնասել մեր անձնաւորութեանը, իսկոյն կատաղի գազանի նման կը յարձակվենք, պատառ պատառ կուզենք անել նորան. մինչդեռ պարզ ապացոյց չէ, որ մեզանում հասարակութիւնը վերացականութիւն է։

Անցած օրը Հ. Բալանթարեանցը իր քարոզի մէջ շատ ուղիղ նկատեց, թէ մեր ժողովուրդը իր հասարակական գործերը կառավարելու համար երեցփոխան կամ հոգաբարձու ընտրելով յանձնում է իր գործը բոլորովին նորա ձեռը, իսկ ինքը ձեռ-

---

թեամբ բռնած ընթացքը համոզում է մեզ այդ ճշմարտութեան մէջ և անաչառ դիտողի համար այդ վարմունքը այնքան կասկածելի է երեւում որ մտածել է տալիս թէ ինչ որ անում է Թիւրքիան, նա այդ անում է ոչ թէ անհոգութեան, անհեռատեսութեան, կամ անընդունակութեան պատճառով, այլ հետեւում է առաջուց գծագրված, հեռատես, քաղաքական պլանին՝ սպառել, ոչնչացնել, ջնջել հայոց տարրը Հայաստանի մէջ. փաստերը հաստատում են այդ կասկածները։

Ահա ապացոյցներ։

Երբ որ մի պետութեան մէջ երաշտութիւն է լինում և սով է յայտնվում, ամեն պետութիւն, ինչքան էլ անհոգ լինէր, առհասարակ, աշխատում է, իր կարողութեան չափ օգնութիւն հասցնել իր հպատակներին. իսկ Թիւրքաց տէրութիւնը, հէնց որ սովը յայտնվեց Հայաստանում, իսկոյն հրաման հրատարակեց, որով արգելվում էր ցորենի մուտքը Թիւրքաց երկիրը Ռուսաստանից, կամ Պարսկաստանից։ Այդ բաւական չէ. Կ. Պօլսի մամուլը, հեռագիրները վկայում են, որ նոյն երկրում, Հայաստանում, կառավարութեան հրամանով թոյլ տրվեցաւ հաց բերել սովատանջ վանեցիներին միայն Վանից հեռու գտնված Սվազից, իսկ մօտակայ Բիթլիսից արգելվեցաւ տեղափոխել ցորենը։ Անգլիայի հիւպատոսները վկայում են որ շատ տեղ հացի կառավարչական պահեստների վերակացուները ծախում էին մեծ գնով պահեստներում ունեցած ցորենի պաշարը զանազան չարչիներին և հարստահարողներին, իսկ տէրութեանը յայտնում էին որ սոված ժողովուրդը կերաւ ամբարները, կողոպտեց այդ հացի պահեստները։ Հացը բաժանվում էր հայերին թշնամի քիւրդերին, իսկ հայերին գրեթէ ոչինչ չէր տրվում, այն ինչ քիւրդերը անցեալ տարի բաւական կողոպտած էին հայ ժողովուրդը և խլած էին նրանից հացի մնացորդը. Այժմ քիւրդը կառավարութիւնից իր ստացած հացը կրկին թանգ գնով հայերի վրա էր ծախում։

Բացի սովից պէտք է ուշադրութիւն դարձնել և մի ֆինանսական կամայական միջոցի վրա, որ Թիւրքաց կառավարութիւնը գործ դրեց նոյն միջոցներում։ Նա առանց այլևայլութեան յանկարծ շրջանառութիւնից հանեց պետական դրամների տեսակներից մինը, այն է կայմէ ասված դրամը, և փոքր միջոցից յետոյ յայտնեց որ ժողովրդի ձեռքում մնացած մեթալիք ասված դրամն էլ նոյնպէս չէ ընդունում և աղքատացած ժողովրդից սկսեց հարկը պահանջել ոսկով և արծաթով։

Հէնց որ Բ. Դուռը տեսաւ թէ լրագրութիւնը խօսում է Հայաստանի մէջ տիրող սովի մասին, իսկոյն արգելեց Կ. Պօլսում հրատարակվող հայ լրագիրներին խօսել այդ առարկայի վրա, իսկ Անգլիայում հրատարակվող հայ լրագիրներին և ամսագիրներին արգելեց մուտքը Թիւրքաց պետութեան սահմանները։ Յետոյ Թիւրքաց կառավարութիւնը խափանեց մի քանի լրագիրներ նոյն իսկ Կ. Պօլսում։

Այդ ժամանակ Թիֆլիսում կազմվեցաւ հայ կանանց մասնաժողով, որպէս բաժին այն ընկերութեան, որ վերջին պատերազմի ժամանակ առաջ կառավարութեան թոյլտւութեամբ կազմակերպվեցաւ հայ գաղթականներին օգնելու դիտաւորութեամբ, մեր պարբերական հրատարակութիւնները սկսեցին փողեր ժողովել յօգուտ Վասպուրականի սովատանջների, Վանի մէջ հիմնվեցաւ սովատանջներին խնամող մասնաժողով, Կ. Պօլսի մէջ հաստատվեցաւ Հայաստանի սովատանջներին խնամող կենտրոնական մասնաժողով, Ռուսաստանի հայերը 50,000 ռուբլուց աւելի ուղարկեցին իրանց Թիւրքաց սովատանջ հայ եղբայրներին։ Ես հաշւում եմ 56,000 ռուբլ, որովհետև մինչև այժմ «Մշակը» միմիայն ուղարկեց 30,000 ր., կանանց կոմիտէտը Թիֆլիսում 10,000 ր., «Փորձի» խմբագրութիւնը 6000 ր., «Մեղու Հայաստանի» լրագիրը մօտ 4000 ր., առանց որ մօտաւորապէս էլ մի 6000 ր. ուղարկվեցաւ Ս. Պետերբուրգից և Մոսկվայից մի քանի մասնաւոր անձանց ձեռքով և մեր մի քանի հոգևոր կառավարութիւնների միջնորդութեամբ։

Եւ ինչպէս վերաբերվեց Բ. Դուռը դէպի այդ նուիրատուութիւնները, նա սկսեց ամեն միջոցներով արգելել որ այդ փողերը տեղը հասնեն, հրահանգներ էր տալիս որ Կ. Պօլսի կենտրոնական մասնաժողովից Վան կամ Հայաստանի այլ տեղեր ուղարկվող հեռագիրները ուշանան, կամ բոլորովին անհետանան, հրահանգներ էր տալիս իր պաշտօնեաներին որ հետևեն թէ որտեղ մասնաժողովը փողեր կը բաժանի և աշխատեն իսկոյն հայ ժողովրդից հարկեր ժողովել, (այդ էր պատճառը որ Կ. Պօլսի մասնաժողովը վախենում էր հաշիւ տալ թէ որտեղ ինչքան փող էր ուղարկում) խոստանում էր սովատանջ ժողովրդին հաց տալ, նրանից փոխարինաբար պահանջելով ապագայ հունձքը, բայց չէր կատարում իր խոստումը, ոչ մի տեղ սերմացու չը տալով և հանգիստ սրտով նայելով ինչպէս ժողովուրդը գաղթում էր դէպի Պարսկաստան կամ Ռուսաստան։ Վերջապէս երբ Բ. Դուռը տեսաւ թէ Կ. Պօլսի հայոց մասնաժողովը չը նայելով բոլոր արուեստական արգելքների, բաւական աջող կերպով գործում է, նա հիմնեց թիւրքերից բաղկացած մի մասնաժողով և հրամայեց որ հայոց մասնաժողովը իր բոլոր փողերը յանձնի Թիւրքաց պաշտօնական մասնաժողովին։ Հայոց մասնաժողովը կարողացաւ իր գոյութիւնը միայն նրանով ազատել, որ դրեց իրան եւրոպական և ամերիկական դեսպանների հովանաւորութեան տակ։ Մասնաժողովը յայտնեց որ իր ձեռքում ունեցած փողերի մեծ մասը փոխարինութեամբ էր ստացել։

Սրանով ես վերջացնում եմ պատասխանութեան առաջին մասը, իսկ պատասխանութեանս երկրորդ մասի մէջ ես մի թեթև հայեացք կը գցեմ երաշտութեան և սովի պատմական մի քանի իրողութիւնների վրա եւրոպական երկիրներում և կը յիշեմ թէ ինչ ժամանակաւոր և մշտական միջոցներ է առաջարկում երաշտութեան և սովի երեւոյթին դէմ եւրոպական գործնական կեանքը և եւրոպայի հասարակական և քաղաքական գիտութիւնը։

(Կը շարունակվի)

Fonds A.R.A.M

Խմբագիր—Հրատարակող ԳԱՐԵԳԻՆ ՆԱԶԱՐԲԵԿ

«ՓԵՇԱԿ» ՀԱՅԵՐԵՆ ՕՐԱԹԵՐԹ

ԹԱՓԱՍՊԱՏԻՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Պոլիս, 24 Յունուար։ Ի. Վալտ ընտրուած է Միացեալ Նահանգաց նախագահ 2500 ձայնի մեծամասնութեամբ։ Ի. Վալտ յօդուածի մէջ կը գրէ, որ ինք կը հաւատայ, որ Ճարտասանական արուեստը կը մեռնի, եթէ ան չդիմէ ճշմարտութեան։ Ինչպէս կ՚ըսէ ինք, ամերիկացի ժողովուրդը կը սիրէ ուղիղ եւ պարզ խօսքը։ Ան կ՚ըսէ, որ ինք չի հաւատար, թէ ամերիկացի ժողովուրդը կը սիրէ ծաղրական եւ ծանր խօսքերը։ Ան կ՚ըսէ, որ ինք կը հաւատայ, թէ ամերիկացի ժողովուրդը կը սիրէ ուղիղ եւ պարզ խօսքը։ Ան կ՚ըսէ, որ ինք կը հաւատայ, թէ ամերիկացի ժողովուրդը կը սիրէ ուղիղ եւ պարզ խօսքը։

Ա. Պոլիս, 24 Յունուար։ «Ֆրօ. Ինֆորմասիոն» լրագրէն կ՚իմանան, թէ «Times»-ի հաւատարմատար թղթակիցը Լոնտոնի մէջ մի ընդարձակ հարցազրոյց ունեցած է Ռուսիոյ նախարարական նախագահ Գոլիցինի հետ։ Գոլիցին կ՚ըսէ, որ ինք կը հաւատայ, թէ ռուսական ժողովուրդը կը սիրէ ուղիղ եւ պարզ խօսքը։ Ան կ՚ըսէ, որ ինք կը հաւատայ, թէ ռուսական ժողովուրդը կը սիրէ ուղիղ եւ պարզ խօսքը։

Ֆրանսայի Լիմոժ քաղաքին մէջ 300 տարի յառաջ հաստատուած վարժարանը, որ տակաւին կը գործէ, ամէն տարի կը տօնէ իր հիմնադրութեան յիշատակը։ Այս տարի տօնակատարութեան ներկայ եղած են քաղաքին բոլոր պատուաւոր անձերը, ինչպէս նաեւ շրջակայ գիւղերէն եկած բազմաթիւ հիւրեր։ Ուսումնարանին տնօրէնը, որ ինքն ալ հին աշակերտ մըն է, իր ճառին մէջ ըսած է, թէ ինչ ուրախութեամբ կը տեսնէ, որ այսքան հին վարժարան մը տակաւին կը գործէ, եւ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆՆԵՐ

ՄՕԶՈՒՈՔԻ

Հայոց օբնարդաց դպրոցի համար պահանջվում է մի վարժուհի նախապատրաստության պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

2—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ *Ծախվում են օլէօգրաֆիական պատկերներ 20% զիջողմամբ. վերարկուներ 6— 0 ր., խալաթակներ պատմճենափաթթած են լրի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելիներ, արկղիկով 4 ր., Նէֆիլի գանակներ 3—20 ր. դիմիթներ, բրիտանական մետաղի թէյամաններ 30 կ.,—3 ր., դիմադրամզնելիք, թխբրգական չերքէզ և Ծարաւը Բագեցնող նիւթ 70 կ., ամենալաւ պօմադկէն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:*

18—20

ПО СЛУЧАЮ СЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъ-этажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлеванъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля $2^3/_4$ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала — 5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

1—3

Համեմատելէ անգլիական խանութի թէյէն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ժամադիր համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ժամադիր բուլխանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

20—100

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ *երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամրոցի հագուստ, պէջակ 5 ր., ՈՂՏԵՂ Է ՇԱՒՈՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամպէյ, պարատեղն, արխո, գրաց, փօսոխ Ժուպէ, Ժաքէտ կոբաստերի և կտաւների համար, կալենկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ հասել մոբարաներ, կօնֆիտներ հագի գէմ պաներ, մադնեզիա, սամանիներ, կարբոլեան փոշի, սապօն, պարսկական փոշի և այլն: Ա.յս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱՆԷՖԱՆ գնեթով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:*

19—20

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻԵՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Գատրատամած մարդ ցորնից առանց թևերի, բերած է Կյահից և ծախվում է Կաւկասում նոր բացված պահեստում, Ելիզաւետպօլի փողոց, տուն Բանանովի, Փօթխիխիմեան երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Կյահից բերած և Փօթխում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

1—5 (2)

ԲԼԱՒԱԿԱՆ *գործոյ 6-ղ գաւառատ ԱՇԱԿԵՑ ցանկանում է մուտառ ԳԱՍԵՐ առնել և ՊԱՏՐԱՍՏԵԼ երեխաներին այդ գործոյն ՉԱՆԱՉԱՆ ԳԱՍԱՏԻՒԹՒՆՆԵՐԻ Համար: Հասցէն «Մշակի» խմբագրատանը:*

2—2 (2)

Շուտով մամուլի տակից լոյս կը տեսնէ Պետերբուրգի Փրիօրեան ընկերութեան հետևեալ հրատարակութիւնների հայերէն թարգմանութիւնները:

I. *Ադոլֆ Գիլ «ԵՐՐՈՐԴ ՈՍԿԻ» II. Ամենաբնական «ՆՈՉ Է ԽՕՍՈՒՄ ՍՆՆԴԱԿԸ» III. Սմիրնովի «ՀՈՐԹԱՐԱՆ:» Գործանցից մէկը արդէն մամուլի տակ է:*

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, *որ գիտէ հայերէն, ռուերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՕՐՉԻԿԻ ԳՈՐԾԱԿԱՏՈՒՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:*

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկաւարթ. Գավրօնսկի կանանց հիւանդ. Փօրալևվից ներքին հ., Փօտխանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խէրուբգիական և աչքերի հ., Շամբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան Ջոպին և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևվիչ խէրուբգիական հ., Վզօրօվ վիներական և բազպի հ., Բէյխ աչքի հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեազով, Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցկի և Բուգմօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կինեբական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բազպի հ., Փօխենհանց կանանց և երեխաների հ., Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևվիչ խէրուբգիական հ., Կրասնօգլեազով և Լիսիցկի ներքին հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեվ Ջոպին և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Բօրօվ կուրծքի հ., Կանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ապրատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաևով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեան 9 ր ե խ ա ապրատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցկի:

Ծանուցի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՑԻ ՊԵԿԱՐՆԻՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի առանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, Թէյ և պատրաստած հանքային զանազան ջրեր:

3—40

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Հագուստներ, բեմբլմներ, գանահներ, պրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, խալաթներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

11—20

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԽԻԼԻԽ ՀԱՆՐԻԽ ՅՈՒՐԵՐՄԱՆԻ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇԱՅԱ ՄՕՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտաքսահանդեպ ամենալաւ գործարաններից հոգերանութ տասցված երաժշտական գործիքներ:

ՉՈՒԹԱԿՆԵՐ $2^1/_2$ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և ամենի թանգ մինչև 150 ր.. ԿՆՏՆՈՒՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., $1^1/_2$ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և ամենի թանգ մինչև 25 ր., ԱՐԿՂՆԵՐ $2^1/_2$ ր., $5^1/_2$ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և ամենի թանգ մինչև 20 ր.. Հին խաչատրեան և գերմանական ջութակներ մինչև 600 ր.. ՉՈՒԹԱԿՆԵՐԻ փոքր գլխի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.. Ջութակի չհզա (ինքնաուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.. ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և ամենի թանգ. ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և ամենի թանգ մինչև 600 ր.. վիօլօնչելի չհզա 4 ր.. ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և ամենի թանգ. ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և ամենի թանգ մինչև 100 ր.. Գիտարի չհզա (ինքնաուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.. ՑԻՏԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և ամենի թանգ մինչև 100 ր.. Ցիտարի չհզա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իրաքանչիւր տետրակը. ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և ամենի թանգ. չհզա 3 ր.. Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այլ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՕՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր.. 6 ր.. Սուրդին կանիֆոլ և այլ պատկանելիք. ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.. երկաթի ծալվող ՊԻՊՊԵՏՐՆԵՐ 5 ր.. երկաթի ծալվող պիւպիտրներ մոմակալներով 6 ր., 8 ր.. Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր.. 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և ամենի թանգ. Գարմոնիայի չհզա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իրաքանչիւր տետրակը. ԿՕՐՆՈՊԻԱ.ՊԻՍՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և ամենի թանգ մինչև 100 ր.. Շհզա (ինքնաուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.. ԱԼՏՖՕՐՆ. ՆՇԱՆԱՓՈՂՆԵՐ, ՏՐՕՄՊՕՆՆԵՐ, ՖԼԷՑՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր.. 30 ր., 40 ր., 60 ր. և ամենի թանգ. Շհզա (ինքնաուսուցիչ) $1^1/_2$ ր., և 3 ր. նոտաներ 40 կ., $1^1/_2$ ր., 3 ր. իրաքանչիւր տետրակը. ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.. Կլարնետի չհզա 4 ր., Բեկհօլօ, Զահաներ, Ֆլաժօլետներ. Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր.. և թանգ մինչև 160 ր.. Շհզա 3 ր., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., $1^1/_2$ ր., Գերմանական կօնցերտինս 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.. Շհզա (ինքնաուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ.. և 1 ր. իրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.. ՖԻՍԴԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և ամենի թանգ. ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԷՑԻՑ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր. 90 ր.. ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆլեւտ ՕՐԳԱՆՈՎ. 175. և 225 ր.. ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.. Իտալական չարմանկաներ 150 ր.. 200 ր., 250 ր.. ՕՐԳԱՆՆԵՐ Թաչումների համար 10 ր., 15 ր.. Թմբուկներ, լիտավրներ, քոնչաներ, բանգօներ, մետալական չրխունչների բլկհաներ, եաանկիներ, գարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշդութեամբ. Ձանապարհածախսը գնողին է վճարվում են հասով և մեծ քանակութեամբ.

1—1

Ծախվում են ԸՆԿՈՒՉԵՆՈՒՑ լաւ հինված ՊԱՀԱՐԱՆՆԵՐ (չհաճներ) իրանց բոլոր յարմարութիւններով: Կարելի է տեսնել ամենայն օր Սօլօլակ, տան Ի. Սամբատովի, վարշավսկայա պեկարնիա:

3—5 (2)

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Երիցեանցի «Հայկական գրավաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Վինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի. Տան տնտեսական (մասնաւորական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, տան քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գներն: Օտար քաղաքացիք գրում են:

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

11—20

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ „**Сборника свѣдѣній о Кавказѣ**“, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Береництама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 25 Іюня 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 109 Յունիսի 27 (Յուլիսի 9) 1880 Յունիսի 27 (Յուլիսի 9) № 109

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի. Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բ. Դրան պատասխանը.—Ներքին տեսութիւն. Նամակ Պոլսից. Նամակ խմբագրին. Արտաքին տեսութիւն. Բերլինի կոնֆերենցիա. Կոչնակի քննադատութիւնը.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Սովը Հայաստանի մէջ.

ԲԱՐՁՐ ԴՌԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Մշակի» երէկվայ համարում ընթերցողը կարդացած կը լինի Կ. Պոլսից ստացած մի հեռագիր որի մէջ յայտնված է թէ ինչ է պատասխանել Բ. Դուռը եւրոպական պետութիւնների համաձայն գրութեանը հայոց խնդրի վերաբերութեամբ։ Ահա ինչ է պատասխանել Բ. Դուռը. թէ նա միշտ աչքի առաջ է ունեցել Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը, թէ նա վաղուց պատրաստութիւններ էր տեսնում Հայաստանում բարենորոգումներ մտցնելու դիտաւորութեամբ։ Իր պատասխանի վերջում Բ. Դուռը աւելացնում է թէ այն երկիրներում, որտեղ բնակվում են հայերը, այսինքն այն երկիրներում Հայաստանում, որտեղ պէտք է մտցնելեն պահանջվող վերանորոգութիւնները, հայերը ընդամենը տասն և եօթ պրոցէնտ են կազմում ազգաբնակութեան ընդհանուր թւից, այսինքն որ հարիւր մահմետականի վրա միայն տասն և եօթ հայ կայ...

Պարզ է որ հայերի թիւը դիտմամբ փոքրացրած է Թիւրքաց մինիստրութեան կողմից Եւրոպային տուած պատասխանի մէջ, որպէս զի Եւրոպան համոզվի որ հայերը այնքան փոքրաթիւ են, որ այլ ևս չարժէ նրանց մասին հոգալու...

Բայց այդ ի՞նչպէս է եղել որ երկու տարի սրանից առաջ հայերը Հայաստանի չորս վիլայէթներում, որոնց համար՝ ինքնավարութիւն էր պահանջվում, աւելի բազմաթիւ էին, քան թէ նոյն երկրի բոլոր միւս ազգաբնակութիւնները միասին վեր առած, իսկ այժմ յանկարծ նրանց թիւը այդքան նուազել է.... Հայ պատգամաւորներից Բերլինի կոնգրէսին ներկայացրած Օրգանական Կանոնադրութեան մէջ մենք տեսանք հետևեալ թւանշանները, նոյն իսկ թիւը պաշտօնական աղբիւրներից վեր առած։

Չորս վիլայէթներում, որոնց համար պահանջվում էր ինքնավարութիւնը, այսինքն՝ Վանի, Բաղէշի, Էրզրումի և Դիարբէքիրի վիլայէթներում ընդամենը 2,062,300 հոգի ազգաբնակութիւն կայ, որից 1,330,000 հայ են, իսկ 732,300 թիւրք, քիւրդ, ասորի, զազա, եզիդ և այլն.... Մի՞թէ մի միլիոն և երեք հարիւր հազար հոգուց բաղկացած ազգաբնակութեանը չարժէ ինքնավարութիւն տալ, երբ յոյները, թւով մի միլիոնից էլ պակաս լինելով ստացան կատարեալ անկախութիւն։

Եւ ի՞նչ կը նշանակի հայերի թիւը դիտմամբ փոքր ցոյց տալ աշխատել. մի՞թէ այն բարեկարգութիւնները, որ հայերը պէտք է ստանան, չեն տարածվի նոյնպէս և Հայաստանում բնակվող մահմետականների վրա։

Եւ չը պէտք է մոռանալ, որ օրգանական կանոնադրութեան մէջ յիշված այն 1,330,000 թւում յիշված են միմիայն լուսաւորչական հայերը, իսկ հայ-բողոքականները, հայ-կաթօլիկները և հայ-մահմետականները յիշված չեն...

Լրագիրները հաղորդում են, որ Եւրոպայի համաձայն գրութեանը պատասխանելու պարտաւորութիւնը յանձնված է հայազգի Դադեան Յարութիւն էֆէնդիին։ Շնորհաւորում ենք, ուրեմն, ազգասէր Դադեան էֆէնդիին, որ ամեն ջանք է գործ դնում որպէս զի դիտմամբ փոքրացնի հայերի թիւը

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

II.

Ընդհանուր տնտեսական հիմունքներ.—Հացի գնի և ազգաբնակութեան բարօրութեան մէջ եղած յարաբերութիւնը.—Ուրիշ միջոցներ առաջին հարկաւորութեան.—Ձուկը հիւսիսային Նորվեգիայում.—Վարգէնտինի միտքը.—Հացի քանակութեան և պսակների թւի մէջ եղած յարաբերութիւնը.—Կարտոֆիլի մշակութեան հետևանքը Իռլանդիայում.—Վիլիամ Պէտտի.—Ժան-Բատիստ Սէ ժողովրդի սննդի մասին.—Սովի պարբերականութիւնը.—Երկու դպրոցներ. կառավարութեան միջամտութիւնը հացի ժողովրդական հայթայթման մէջ և ազատ մրցութիւնը.—Մի քանի տեղեկութիւններ պատմութիւնից.—Սովը Ֆրանսիայում և Սաքսոնիայում 1817 թւին.—Ադամ Սմիթ, ՄԷ, Բաստիա և ուրիշներ.—Նեկկեր և հացի պահեստների սիսթեմը.—Հացը երկրից դուրս բերելու արգելքը.—Անհրաժեշտութիւնը հացի պահեստների մտցման.—Միջոցներ թիւրքաց Հայաստանի սովատանջներին օգնելու համար.—Հայաստանի մէջ վերանորոգումներ մտցնելու անհրաժեշտութիւնը.—Ազգային տառապանքը վերականգնեցրեց բարոյական կապ այլ և այլ դասակարգութեան հայերի մէջ.—Ռուսաստանի և Եւրոպայի համակրութիւնը դէպի հայերը.

Յայտնի է որ ցորենի գնի բարձրանալը կամ ընկնելը անմիջական ներգործութիւն ունի ազգաբնակութեան բազմանալու կամ թւով նուազելու վրա։ Այդ այն պատճառով է, որ հացը մարդկութեան համար կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքն է։ Մեր բոլոր կենսական պահանջներից կերակուրը այն պահանջն է, որին անմիջապէս բաւականութիւն տալը անհնարին է յետաձգել։ Երբ որ ազգաբնակութիւնը աճում է, ամենից առաջ ուտելեղէն նիւթերի գներն են բարձրանում։

Առաջին հարկաւորութեան ուտելեղէնների գները բարձրանում են կամ երբ որ ազգաբնակութեան թիւը մեծանում է, կամ երբ որ անաջող և երաշտ տարի է լինում։ Երբ որ կենսական առաջին պիտոյքի մթերքը թանգանում է, այն ժամանակ ամբոխը գործ է դնում իր ամբողջ ունեցածը միմիայն այդ պիտոյքը լցուցանելու վրա, զրկվելով երկրորդական պահանջներից, ինչպէս շորերից, մաքրութիւնից, հիւանդութեան ժամանակ բժշկական օգնութեան դիմելուց, և այլն։ Երբ որ գլխաւոր ուտելեղէնի պակասութիւն է լինում, ամբոխը զրկւում է իրան բոլոր մնացած կենսական պահանջներից։

Բայց ամեն երկիրներում ցորենը չէ կազմում կեանքի միակ և գլխաւոր աղբիւրը. շատ երկիրներում ուրիշ ուտելեղէններ կան, որոնք պակասելով, կամ առատութեամբ աւելանալով անմիջապէս ազդեցութիւն ունեն ժողովրդի թւի նուազելու կամ աճելու վրա։ Հիւսիսային Նորվեգիայի ծովեզրեայ ազգաբնակութիւնը, որ գլխաւորապէս ձկներով է կերակրվում, անմիջապէս սկսում է թւով նուազել, ինչպէս պատմում է Ֆաբրիցիուս, (Fabricius) այն տարիներում, երբ անյայտ պատճառներով ձկները հեռանում են Նորվեգիայի ափերից։

Շվէդացի գիտնական Վարգէնտին (Wargentin) թւանշաններով ցոյց է տալիս թէ որքանով աւելանում կամ պակասում է ծնունդների և պսակների թիւը իր հայրենիքում, նայելով թէ տարին կենսական առաջին պիտոյքի վերաբերութեամբ առատ կամ երաշտ է եղել։

Ահա մի քանի թւանշաններ։ Երկու աջող տարիներում պսակների թիւը եղել է 46,000, իսկ երկու անաջող տարիների ընթացքում՝ 38,000 ուրեմն 8000 պսակներ պակաս քան թէ երկու աջող տարիներում։ Ծնունդների թիւը երկու աջող տարիներում եղել է 182,000, իսկ երկու անաջող տարիներում 165,000, ուրեմն 17,000 ծնունդ պակաս քան թէ երկու աջող տարիներում։

Անգլիացի Միլն թւանշաններով ցոյց է տալիս որ հէնց որ ցորենի գինը Անգլիայում փոքր ի շատէ բարձրանում է, մահերի թիւը, զուգընթացաբար ցորենի գնի բարձրանալու հետ շատանում է և կրկին պակասում է, երբ ցորենը իր սովորական գինն է ընդունում. *)

*) M. Mylne «Life annuities».

Բացի ցորենից պէտք է յիշել այստեղ և գետնախնձորը (կարտոֆիլ), որի մշակութիւնը տարածվելով ամբողջ Եւրոպայում, նոյնպէս մեծ ներգործութիւն ունի ազգաբնակութեան աճման վրա։ Եւ այդ երևոյթը գրեթէ ամեն տեղ նկատվում է, որտեղ կարտոֆիլ ընդունված է, որպէս ժողովրդի առաջին հարկաւորութեան կենսական միջոց։ Բայց մանաւանդ Իռլանդիայում կարտոֆիլ նշանաւոր ներգործութիւն ունեցաւ ժողովրդի թւի աճման վրա։ Դեռ 1672 թւին գիտնական Ուիլիամ Պէտտի (Wiliam Petty) հաշւում էր Իռլանդիայում 1,100,000 բնակիչ։ Իսկ 1754 թւին, երբ կարտոֆիլի մշակութիւնը տարածվեցաւ Իռլանդիայում, ազգաբնակութեան թիւը այդ երկրում բազմացաւ մինչև 2,300.000 հոգի։ Արդէն 1791 թւին կատարված ժողովրդագրութիւնից երևում է որ Իռլանդիայի ազգաբնակութիւնը 5,900,000 էր հասել, իսկ 1841 թւին արած ժողովրդագրութիւնից երևում է որ իռլանդացիները արդէն 8,130,000 էին թւով։ Մի ճանապարհորդ և քաղաքագէտ, պ. Դիւվէրժիէ դը Հօրան, (Duvergier de Hauranne), կարծում է որ ազգաբնակութեան այդ քանակութիւնից աւելի Իռլանդիան անկարող է կերակրել։

